ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
Հունվար
02.2020
03.2020
04.2020
05.2020
06.2020
07.2020
08.2020
09.2020
10.2020
11.2020
12.2020

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Հունվար

թիվ 1 (257)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՏՈՒՆԱՌ», «ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ներին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» ՓԲԸ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՈՒՎԿ ՍՊԸ Արտաշատի ներկայացուցչությունը գրանցումից հանելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» ՓԲԸ գործունեության դադարեցումը, «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ Վեդիի ներկայացուցչությունը, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Իջևան» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «ՆՈՐԱԳԱՎԻԹ» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 վարկային կազմակերպության, 6 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 2 փոխանակման կետի, 1 վարկային կազմակերպության, 2 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 10Լ որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1-Ն որոշումը «2020-2021 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Ժանսեմ-100» ոսկե, «Ժանսեմ-100» արծաթե, «Խրիմյան Հայրիկ-200» արծաթե, «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ-75» արծաթե, «Գևորգ Չավուշ-150» արծաթե, «Եղիշե Թադևոսյան-150» արծաթե, «Անրի Վեռնոյ-100»արծաթե, «Հրաչյա Ներսիսյան-125» ոսկե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 2-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 363-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 3-Ն որոշումը ««Ֆինանսական կազմակերպությունների կողմից «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգի օգտագործման և համակարգում տվյալների լրացման կանոններ» կանոնակարգ 8/03.2-ը հաստատելու մասին»

107 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Տունառ», «Ծիածան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիաները (որոշումներ թիվ 7Ա, 8Ա, 9Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Արտաշատի ներկայացուցչությունը (որոշում թիվ 1/19Ա):
- ***Գրանցվել են*** «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարեցումը, «ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության Վեդիի ներկայացուցչությունը, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Իջևան» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/20Ա, 1/31Ա, 1/34Ա):
- ***Թույլատրվել է*** «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Նորագավիթ» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի ***գործունեության դադարեցումը*** (որոշում թիվ 1/39Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 վարկային կազմակերպության, 6 գրավատան նկատմամբ կիրառվել է տուգանք 2300000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/09Ա, 1/24Ա, 1/25Ա, 1/26Ա, 1/40Ա, 1/47Ա, 1/48Ա), 2 փոխանակման կետի, 1 վարկային կազմակերպության, 2 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/07Ա, 1/08Ա, 1/09Ա, 1/24Ա, 1/46Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2020 թ. հունվարի 24-ի թիվ 10Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 7.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4%:***

2020-2021 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Ժանսեմ-100» ոսկե, «Ժանսեմ-100» արծաթե, «Խրիմյան Հայրիկ-200» արծաթե, «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ-75» արծաթե, «Գևորգ Չավուշ-150» արծաթե, «Եղիշե Թադևոսյան-150» արծաթե, «Անրի Վեռնոյ-100»արծաթե, «Հրաչյա Ներսիսյան-125» ոսկե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «է» կետը, 40-րդ հոդվածը, ***ղեկավարվելով*** «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. 2020 թվականի մարտի 5-ից շրջանառության մեջ դնել «Ժանսեմ-100» ոսկե և «Ժանսեմ-100» և «Խրիմյան Հայրիկ-200» արծաթե հուշադրամները:

2. 2020 թվականի ապրիլի 21-ից շրջանառության մեջ դնել «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ-75» և «Գևորգ Չավուշ-150» արծաթե հուշադրամները:

3. 2020 թվականի մայիսի 20-ից շրջանառության մեջ դնել «Եղիշե Թադևոսյան-150», «Անրի Վեռնոյ-100» արծաթե և «Հրաչյա Ներսիսյան-125» ոսկե հուշադրամները:

4. Հաստատել սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման Հավելվածում (կցվում է):

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
22 հունվարի 2020 թ., N 1-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունվարի 17-ին (ՀՀԳՏ N4 (672)[1], 07.02.2020):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունվարի 17-ի
թիվ 1-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ժանսեմ-100» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Ժանսեմի «Դիմակներով կինը» կտավից դրվագ: Ներքևի մասում թողարկման տարեթիվն է՝ «2020», ձախից «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է, աջից՝ անվանական արժեքը՝ «10000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին Ժանսեմի դիմապատկերն է, աջից «ԺԱՆՍԵՄ» և «Jansem» երկլեզու մակագրություններն են, նկարչի ծննդյան և մահվան տարեթվերը՝ «1920-2013»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը/հարգը ոսկի	900^0
Տրամագիծը	22,0 մմ
Քաշը	8,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	300 հատ

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Ժանսեմ-100» ոսկե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ժանսեմ-100» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է նկարչի «Կակաչներ» կտավից դրվագ: Ձախ մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է և անվանական արժեքը՝ «100 ԴՐԱՄ»: Ներքևի աջ մասում թողարկման տարեթիվն է՝ «2020»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են նկարչի դիմանկարը և նրա «Դեղին հագուստով կինը» կտավից դրվագ: Մակագրություններն են՝ «ԺԱՆՍԵՄ», «Jansem», ծննդյան և մահվան տարեթվերը՝ «1920-2013», «100 ամյակ»:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը արծաթ	925^0
Չափը	28,0 × 40,0 մմ
Քաշը	28,28 գ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Ժանսեմ-100» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Խրիմյան Հայրիկ-200» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Խրիմյան թանգարան-պատկերասրահի շենքը, զարդանախշ՝ վարդյակ, «Երկաթե շերեփ» հուշաղբյուրից հատված (գործ՝ Արեգ Իսրայելյանի): Վերևի մասում հուշաղբյուրին դրոշմված՝ Խրիմյան Հայրիկի պատգամն է և ստորագրությունը: Շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է, աջ մասում թողարկման տարեթիվը՝ «2020»:

Հուշադրամի դարձերեսին Խրիմյան Հայրիկի դիմապատկերն է, «200 ամյակ» մակագրությունը, ծննդյան, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու և մահվան տարեթվերը՝ «1820-1892-1907»: Շրջագծով «S.S. ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ ԽՐԻՄՅԱՆ», «ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ», «His Holiness Mkrtich I Vanetsi Khrimyan», «Supreme Patriarch Catholicos of All Armenians» երկլեզու մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը արծաթ	925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Խրիմյան Հայրիկ-200» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ-75» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են «Մայր Հայաստան» հուշարձանը և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանը: Շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ» երկլեզու մակագրություններն են: Ներքևի մասում «75 ԴՐԱՄ ДРАМ» անվանական արժեքն է, «2020»՝ թողարկման տարեթիվը:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են վահան, գեորգիևյան ժապավեն և «75 ՏԱՐԻ ЛЕТ» երկլեզու մակագրությունը: Վերին և ստորին հատվածներում «ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿ» և «ПОБЕДА В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ» երկլեզու մակագրություններն են: Ձախ մասում պատերազմի սկիզբն ու ավարտը նշող տարեթվերն են՝ «1941-1945»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	75 դրամ
Մետաղը/հարգը արծաթ	925^0
Տրամագիծը	50,0 մմ
Քաշը	67,2 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Կարապետ Աբրահամյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակ-75» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





«Գևորգ Չավուշ-150» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են վահան և թուր՝ արևի շողերի ֆոնին, շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է: Ներքևի մասում «1000 ԴՐԱՄ» անվանական արժեքն է և «2020»՝ թողարկման տարեթիվը:

Հուշադրամի դարձերեսին հայ հայդուկներին նվիրված հուշարձանախմբից (քանդակագործ՝ Յու. Մինասյան) հատվածն է՝ Գևորգ Չավուշի դիմաքանդակի նախօրինակը, և՝ թուրը ձեռքին արծիվ: Ձախ մասում «ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇ» մակագրությունն է, ծննդյան ու մահվան տարեթվերը՝ «1870-1907»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը արծաթ	925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Կարապետ Աբրահամյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Գևորգ Չավուշ-150» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Եղիշե Թադևոսյան-150» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Եղիշե Թադևոսյանի «Նկարչի կինը՝ Ժյուստինը» կտավից դրվագ: Ստորին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է, անվանական արժեքը՝ «100 ԴՐԱՄ», թողարկման տարեթիվը՝ «2020»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Եղիշե Թադևոսյանի «Ինքնադիմանկար» կտավից և «Սևանա կղզու Առաքելոց եկեղեցին» էտյուդից դրվագներ: Ստորին և աջ եզրագծերով «ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ» և «YEGHISHE TADEVOSSIAN» երկլեզու մակագրություններն են, ծննդյան և մահվան տարեթվերը՝ «1870-1936» և «150 ամյակ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը արծաթ	925^0
Չափը	28,0 × 40,0 մմ
Քաշը	28,28 գ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Եղիշե Թադևոսյան-150» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անրի Վեռնոյ-100» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին Անրի Վեռնոյին շնորհված Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանի, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի «Փարաջանովյան թալեր» և «Սեզար» մրցանակների պատկերներն են: Աջ վերին մասում անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», ստորին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է և թողարկման տարեթիվը՝ «2020»: Ֆոնին պատկերված են լուսարձակների ոճավորված ճառագայթներ:


Հուշադրամի դարձերեսին Անրի Վեռնոյի դիմապատկերն է, նրա «Արգելված պտուղ» ու «Մի գիշերվա պատմություն» կինոնկարների պաստառներից հատվածներ: Ստորին մասում «ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅ» մակագրությունն է և ծննդյան ու մահվան տարեթվերը՝ «1920-2002»: Ֆոնին պատկերված են ոճավորված կինոժապավեն և «ԱՇՈՏ ՄԱԼԱՔՅԱՆ» գրառումը:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	28,0 × 40,0 մմ
Քաշը	28,28 գ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Անրի Վեռնոյ-100» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հրաչյա Ներսիսյան-125» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին Հրաչյա Ներսիսյանի հուշաքարին պատկերված խորաքանդակից հատված է (գործ՝ Ստեփան Քյուրքչյանի): Վերին և ստորին մասերում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է, ձախից թողարկման տարեթիվն է՝ «2020», աջից՝ անվանական արժեքը՝ «10000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին Հրաչյա Ներսիսյանի դիմանկարն է (գործ՝ Ներսես Կիրակոսյանի), ծննդյան և մահվան տարեթվերն են՝ «1895-1961»: Աջ մասում «ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ» և «125 ԱՄՅԱԿ» մակագրություններն են:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը/հարգը ոսկի	900^0
Տրամագիծը	22,0 մմ
Քաշը	8,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	300 հատ

Էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հրաչյա Ներսիսյան-125» ոսկե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 363-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը և «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով,

նպատակ ունենալով սույն Կանոնակարգը համահունչ դարձնել օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանված դրույթներին, արդիականացնել և վերացնել կարգի կիրարկման ընթացքում ի հայտ եկած թերությունները,

գիտակցելով շքեղ ծառայություններով վարկային քարտերի վրա սույն Կանոնակարգի կարգավորումները չկիրառելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» կանոնակարգ 8/01-ը հաստատելու մասին» թիվ 363-Ն որոշմամբ հաստատված «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» կանոնակարգ 8/01-ը (այսուհետ՝ Կանոնակարգ) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող յոթանասուներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
22 հունվարի 2020 թ., N 2-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունվարի 17-ին (ՀՀԳՏ N4 (672)[1], 07.02.2020):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունվարի 17-ի թիվ 2-Ն որոշմամբ

«Հավելված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ 363-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 8/01
ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) և «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների և գրավատների կողմից կրեդիտավորման պայմանագրում, գովազդում, հայտարարությունում, առաջարկում, օֆերտայում կամ օֆերտա անելու հրավերում ներառման ենթակա տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ:

2. Սույն կանոնակարգը չի տարածվում բանկերի կողմից տրամադրված այն վարկերի վրա, որոնց համար տրամադրված քարտերը կարող են հնարավորություն տալ օգտվել ֆինանսական գործառնություններ չհանդիսացող «շքեղ» արտոնություններից (օրինակ՝ փոխհատուցման տրամադրում ուղեբեռի կորստի և չվերթի ուշացման դեպքում, բժշկական փոխհատուցում, գնումների ապահովագրություն (գնված ապրանքի կորուստի, վնասման և այլն), ուղեբեռի ապահովագրություն, կոնսիերժ ծառայություն, ավտոքարշակման ծառայություն, անցաթղթի քարտի ծառայություն (Priority Pass), բիզնես սրահների մուտքի հնարավորություն (Lounge Key), ուղեկցում օդանավակայաններում (SpeedPass ծառայություն), վիզա ստանալու աջակցություն, առանց հերթի սպասարկում և այլն): Սույն կետով նախատեսված «շքեղ» արտոնություններ չեն համարվում մանրածախ առուվաճառքի ոլորտում ապրանքների և սույն կետում չթվարկված սպասարկման ոլորտում ծառայությունների տրամադրումը (օրինակ՝ քարտով վճարում կատարելիս առաջարկվող զեղչեր, բոնուսներ, cashback և այլն):

Գ Լ ՈՒ Խ 2
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) «Կրեդիտի մարմանն ուղղված վճարներ»՝ կրեդիտի ստացման և (կամ) գործողության ընթացքում սպառողի կողմից կրեդիտավորման համար կատարվող բոլոր վճարները՝ կրեդիտի մայր գումարը և կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող վճարումները (տոկոսագումարները և այլ վճարումներ),
2) «Այլ վճարումներ»՝ սույն կանոնակարգի 5-րդ կետում սահմանված այլ վճարումների մեջ ընդգրկվող տարրեր:
3) «Կրեդիտավորման ընդհանուր ծախս»՝ բոլոր տոկոսագումարներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել (կատարել) կրեդիտավորման (կրեդիտի ստացման և գործողության ընթացքում) համար,

4) «Տարեկան փաստացի տոկոսադրույք»՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված՝ հիմք ընդունելով սույն կանոնակարգի 4-րդ կետում նշված բանաձևը:
5) «Կրեդիտավորող»՝ ըստ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:
6) «Կրեդիտ»՝ ըստ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:

Գ Լ ՈՒ Խ 3
ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ

4. Բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, վարկային կազմակերպությունները և գրավատները իրենց կողմից տրամադրած կամ տրամադրվելիք կրեդիտների դիմաց հաշվարկում են տարեկան փաստացի տոկոսադրույք՝ հիմք ընդունելով Օրենքի 13-րդ հոդվածով տրված տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{Kn}{Dn\,(1+i)^{365}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերի, սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել կրեդիտի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

A - սպառողին տրամադրվող կրեդիտի սկզբնական գումարն է:

Կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը մեկ միլիոն դրամ է:

n - սպառողի կողմից կրեդիտի մարմանն ուղղված (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ կրեդիտի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում կրեդիտի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

N - կրեդիտի մարմանը (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է (ներառյալ նաև կրեդիտի ստացման պահին կատարվող վճարը), որից հետո սպառողի կողմից կրեդիտային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված: Օրինակ՝ կրեդիտը տրամադրվել է 12 ամսով, կրեդիտի մայր գումարի ու տոկոսագումարների ամենամսյա միաժամանակ մարումների պայմանով և կրեդիտի տրամադրման պահին նախատեսվող այլ վճարումներով, հետևաբար N=13, քանի որ մեկ վճարում իրականացվում է կրեդիտի տրամադրման պահին և ևս 12-ը՝ համաձայն կրեդիտային պայմանագրի պայմանների:

Kn - սպառողի կողմից մինչև կրեդիտի ստացման պահը, կրեդիտի ստացման պահին և (կամ) կրեդիտի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ):

Այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագրով թույլատրվում են տոկոսների և (կամ) սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և (կամ) սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև կրեդիտավորման պայմանագրի գործողության ավարտը:

Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի սպացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ:

Օրինակ՝ կրեդիտը տրամադրվել է սեպտեմբերի 15-ին, կրեդիտի տրամադրման համար կրեդիտի ստացման պահին նախատեսված են այլ վճարումներ, և կրեդիտի առաջին մասնակի մարումը տեղի է ունենալու նույն տարվա հոկտեմբերի 15-ին: Այս դեպքում D1=0, քանի որ այլ վճարումները կատարվելու են կրեդիտի ստացման օրը, D2=30, քանի որ կրեդիտի տրամադրումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը 30 է, իսկ D3-ից մինչև Dn ընկած օրերի թիվը հաշվարկվում է նույն սկզբունքով:

Եթե կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, որ սպառողը կարող է կրեդիտի գումարը ստանալ մաս առ մաս կամ կարող է ընտրել կրեդիտի գումարը ստանալու պահը, ապա կրեդիտի ստացման օր է համարվում կրեդիտավորման պայմանագիրը կնքելու օրը:

5. Կրեդիտավորման ընդհանուր ծախսի և, հետևաբար, տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվող այլ վճարները ներառում են սպառողի կողմից կրեդիտավորման համար պարտադիր կատարման ենթակա հետևյալ վճարները (դրանց առկայության դեպքում)՝

1) կրեդիտի ձևակերպման վճարը,
2) նախկինում ստացված կրեդիտի ժամկետանց մարումներ ունենալու դեպքում տվյալ կրեդիտավորողից նոր կրեդիտի ձևակերպման վճարը,
3) կրեդիտավորման փաստաթղթերի պատրաստման վճարը,
4) կրեդիտի սպասարկման վճարը,
5) գրավի ձևակերպման համար վճարը,
6) կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե կրեդիտավորողը հանդիսանում է այդ կազմակերպությունների, միությունների կամ այլ խմբերի հիմնադիրը կամ մասնակիցը, և կրեդիտի պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից.

Օրինակ՝ բանկը հայտարարում է կրեդիտային պայմանագրի կնքման արտոնյալ պայմաններ այն անձանց համար, ովքեր կհանդիսանան իր կողմից հիմնադրած միության անդամ: Անդամակցության համար պահանջվում է տարեկան անդամավճար: Կրեդիտի ժամկետի ընթացքում սպառողի կողմից վճարվելիք անդամավճար(ներ)ի գումարը պետք է ներառվի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ,

7) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, եթե այդ ծառայություններից օգտվելը հանդիսանում է կրեդիտավորման պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման և այդ ծառայությունների շահառուն հանդիսանում է կրեդիտավորողը կամ կրեդիտավորողը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքել օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր. Օրինակներ՝

ա. Բանկը, որպես կրեդիտավորման պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն՝ հանդիսանալով կնքվող ապահովագրության պայմանագրի շահառուն,

բ. Բանկը, որպես կրեդիտավորման պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքել ապահովագրության պայմանագիր,

գ. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն՝ հանդիսանալով կնքվող ապահովագրության պայմանագրի շահառուն,

դ. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքել ապահովագրության պայմանագիր,

ե. Բանկը, որպես կրեդիտավորման պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն՝ հանդիսանալով կնքվող ապահովագրության պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքել ապահովագրության պայմանագիր,

զ. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն՝ հանդիսանալով կնքվող ապահովագրական պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքել ապահովագրության պայմանագիր,

8) վճարային քարտի հետ կապված բոլոր տեսակի վճարները, երբ սպառողը կրեդիտի ստացման հարցում չունի ողջամիտ այլընտրանք.

Օրինակ՝ բանկը կրեդիտը տրամադրում է միայն իր կողմից տրամադրվող նոր վճարային քարտի միջոցով, որի դեպքում սպառողը չունի ողջամիտ այլընտրանք՝ իրեն պատկանող մեկ այլ գործող վճարային քարտին փոխանցելու հնարավորություն: Ընդ որում, վճարային քարտը գործող է համարվում, եթե այն սպառողին է տրամադրվել նախքան կրեդիտավորման դիմում-հայտ ներկայացնելը և վճարային քարտով մինչև կրեդիտավորման դիմում-հայտ ներկայացնելը սպառողի կողմից իրականացվել են գործարքներ (ելքագրումներ, մուտքագրումներ),

9) Կրեդիտի կանխիկացման համար գանձվող միջնորդավճարը այն ենթադրությամբ, որ սպառողը ամբողջությամբ կրեդիտը կանխիկացնելու է կրեդիտավորողի բանկոմատից, եթե չունի կրեդիտի գումարը օգտագործելու ողջամիտ այլընտրանք (օրինակ՝ Բանկի դրամարկղից առձեռն ստացումը): Ընդ որում, եթե կրեդիտի օգտագործման ընթացքում նախատեսված են պարտադիր համալրումներ, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ չեն ներառվում պարտադիր համալրումներից հետո կատարվող ընթացիկ կանխիկացումների միջնորդավճարները,

10) կրեդիտավորման հետ կապված այլ վճարները, որոնք սպառողը պարտավոր է կատարել կրեդիտավորման համար, բացառությամբ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ չներառվող վճարների:

6. Սույն կանոնակարգի 4-րդ կետում նշված բանաձևով հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը պետք է կլորացնել առնվազն մինչև մեկ հարյուրերորդականը և բազմապատկել 100-ով՝ տոկոսային մեծություն ստանալու համար:

7. Կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի վերադարձման ժամանակացույց կամ կրեդիտավորման պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ սահմանված չլինելու դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում կրեդիտի վերադարձման ժամկետ է համարվում մեկ տարին: Այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա կրեդիտի վերադարձի ժամկետ է համարվում կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենաշուտ ժամկետը, եթե այլ բան նախատեսված չէ կրեդիտավորման պայմանագրով:

8. Արտարժույթով տրամադրվող կրեդիտների տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի ժամանակ կրեդիտի գումարը փոխարկվում է դրամի, իսկ որպես փոխարկման փոխարժեք հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված արտարժույթի փոխարժեքը: Ընդ որում, կրեդիտավորման պայմանագրում, սպառողական կրեդիտների էական պայմանների անհատական թերթիկներում, փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված արտարժույթի վերջին փոխարժեքը, իսկ մնացած դեպքերում, այդ թվում՝ տեղեկատվական ամփոփագրերում և ցանկացած գովազդում, դրանց պատրաստման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված արտարժույթի փոխարժեքը: Վարկի փաստացի մարումների ժամանակ հիմք ընդունվող փոխարժեքը կարող է տարբերվել փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ հիմք ընդունված փոխարժեքից:

9. Եթե կրեդիտավորման պայմանագրով սպառողին հնարավորություն է տրվում կատարել մարումներ ազատ գրաֆիկով, ապա ենթադրվում է, որ կրեդիտի ամբողջ գումարը մարվում է ժամկետի վերջում և ամբողջությամբ:

10. Եթե կրեդիտը նախատեսում է մարումների տարբեր ձևեր, տարբեր պարտադիր վճարներով կամ տոկոսադրույքներով, որոնց հնարավոր չէ տալ գումարային արտահայտություն և ողջամիտ ձևով հաշվարկել տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը, ապա ենթադրվում է, որ կրեդիտի ամբողջ գումարը մարվում է տվյալ/նմանատիպ կրեդիտների համար ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող ամենատարածված մարման ձևով, պարտադիր վճարներով և տոկոսադրույքներով:

11. Եթե կրեդիտավորման պայմանագրով տարբեր ժամանակահատվածների համար նախատեսվում է մարումների տարբեր ձևեր, տարբեր պարտադիր վճարներով կամ տոկոսադրույքներով, որոնք յուրաքանչյուր ժամանակահատվածի համար նախապես հայտնի են, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում պարտադիր վճարներն ու տոկոսադրույքները ընդգրկվում են տվյալ ժամանակահատվածի համար սահմանված չափով:

12. Վարկային գծի (օվերդրաֆտի) դեպքում ենթադրվում է, որ

1) կրեդիտը սպառողի կողմից ամբողջությամբ օգտագործվելու է կրեդիտավորման պայմանագրի կնքման օրվանից սկսված,
2) վերականգնվող վարկային գծի հերթական մարում իրականացնելուն հաջորդող օրը սպառողը կրկին ամբողջությամբ օգտագործելու է վարկային գիծը՝ չօգտագործված մասի չափով,
3) վարկային գիծն ամբողջությամբ մարվելու է կրեդիտավորման պայմանագրի մարման ավարտի օրը,
4) մարման արտոնյալ ժամանակահատվածը (առկայության դեպքում) հաշվի չի առնվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

13.

Օրինակ 1. Պարզ վարկ - Հավասարաչափ մարում	
13.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ Ժամկետ՝ 1 տարի

13.2. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախականություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Մարվող տոկոսա-գումարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	31	4,246.58	39,708.87	43,955.44
2	62	3,909.32	40,046.12	43,955.44
3	90	3,223.80	40,731.65	43,955.44
4	121	3,223.26	40,732.18	43,955.44
5	151	2,784.50	41,170.94	43,955.44
6	182	2,527.65	41,427.79	43,955.44
7	212	2,105.61	41,849.83	43,955.44
8	243	1,820.36	42,135.08	43,955.44
9	274	1,462.50	42,492.94	43,955.44
10	304	1,066.07	42,889.38	43,955.44
11	335	737.33	43,218.11	43,955.44
12	365	358.33	43,597.11	43,955.44
Ընդամենը		27,465.31	500,000.00	527,465.31

13.3. Հաշվարկ	$500{,}000 = \frac{43{,}955.44}{(1+i)^{\frac{31}{365}}} + \frac{43{,}955.44}{\left(1+i\right)^{\frac{62}{365}}} + \cdots + \frac{43{,}955.44}{\left(1+i\right)^{\frac{335}{365}}} + \frac{43{,}955.44}{\left(1+i\right)^{\frac{365}{365}}}$ N=12 i=10.47 (ՏՓՏ=0.1047*100=10.47%)

14.

Օրինակ 2. Պարզ վարկ – Ոչ հավասարաչափ մարում	
14.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ մայր գումարը հավասարաչափ է, սակայն տոկոսները անհավասարաչափ Ժամկետ՝ 1 տարի

14.2. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Մարվող տոկոսագումարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	31	4,246.58	41,666.67	45,913.24
2	62	3,892.69	41,666.67	45,559.36
3	90	3,196.35	41,666.67	44,863.01
4	121	3,184.93	41,666.67	44,851.60
5	151	2,739.73	41,666.67	44,406.39
6	182	2,477.17	41,666.67	44,143.84
7	212	2,054.79	41,666.67	43,721.46
8	243	1,769.41	41,666.67	43,436.07
9	274	1,415.53	41,666.67	43,082.19
10	304	1,027.40	41,666.67	42,694.06
11	335	707.76	41,666.67	42,374.43
12	365	342.47	41,666.67	42,009.13
Ընդամենը		27,054.79	500,000	527,054.79

14.3. Հաշվարկ	$500{,}000 = \frac{45{,}913.24}{(1+i)^{\frac{31}{365}}} + \frac{45{,}559.36}{\left(1+i\right)^{\frac{62}{365}}} + \cdots + \frac{42{,}374.43}{\left(1+i\right)^{\frac{335}{365}}} + \frac{42{,}009.13}{\left(1+i\right)^{\frac{365}{365}}}$ N=12 i=10.47 (SՓS=0.1047*100=10.47%)

15.

Օրինակ 3. Պարզ վարկ - Եռամսյակային հավասարաչափ մարում	
15.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ եռամսյակային, հավասարաչափ Ժամկետ՝ 1 տարի

15.2. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախա-կանություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Մարվող տոկոսագումարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	92	12,602.74	120,293.02	132,895.76
2	181	9,258.61	123,637.16	132,895.76
3	273	6,454.36	126,441.40	132,895.76
4	365	3,267.35	129,628.42	132,895.76
Ընդամենը		31,583.06	500,000	531,583.06

15.3. Հաշվարկ	$500{,}000 = \frac{132{,}895.76}{(1+i)^{\frac{92}{365}}} + \frac{132{,}895.76}{\left(1+i\right)^{\frac{181}{365}}} + \frac{132{,}895.76}{\left(1+i\right)^{\frac{273}{365}}} + \frac{132{,}895.76}{\left(1+i\right)^{\frac{365}{365}}}$ N=4 i=10.38 (SՓS=0.1038*100=10.38%)

16.

Օրինակ 4. Պարզ վարկ - Եռամսյակային ոչ հավասարաչափ մարում	
16.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ եռամսյակային, ոչ հավասարաչափ Ժամկետ՝ 1 տարի

16.2. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախա-կանություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	92	12,602.74	125,000	137,602.74
2	181	9,143.84	125,000	134,143.84
3	273	6,301.37	125,000	131,301.37
4	365	3,150.68	125,000	128,150.68
Ընդամենը		31,198.63	500,000	531,198.63

16.3. Հաշվարկ	$500{,}000 = \frac{137{,}602.74}{(1+i)^{\frac{92}{365}}} + \frac{134{,}143.84}{\left(1+i\right)^{\frac{181}{365}}} + \frac{131{,}301.37}{\left(1+i\right)^{\frac{273}{365}}} + \frac{128{,}150.68}{\left(1+i\right)^{\frac{365}{365}}}$ N=4 i=10.38 (ՏՓՏ=0.1038*100=10.38%)

17.

Օրինակ 5. Պարզ վարկ – Տոկոսագումարի միանվագ վճարում	
17.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ տոկոսագումարը ամբողջությամբ վճարվում է վարկի մարմանն ուղղված մայր գումարի առաջին վճարի հետ Ժամկետ՝ 1 տարի

17.2. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Մարվող տոկոսագումարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	30	26,997.72	41,666.67	68,664.38
2	61		41,666.67	41,666.67
3	92		41,666.67	41,666.67
4	120		41,666.67	41,666.67
5	151		41,666.67	41,666.67
6	181		41,666.67	41,666.67
7	212		41,666.67	41,666.67
8	242		41,666.67	41,666.67
9	273		41,666.67	41,666.67
10	304		41,666.67	41,666.67
11	334		41,666.67	41,666.67
12	365		41,666.67	41,666.67
Ընդամենը		26,997.72	500,000	526,997.72

17.3. Հաշվարկ	N=12 $500{,}000 = \frac{68{,}664.38}{\left(1+i\right)^{\frac{30}{365}}} + \frac{41666{,}67}{\left(1+i\right)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{41666{,}67}{\left(1+i\right)^{\frac{365}{365}}}$ i=10.82 (ՏՓՏ=0.1082*100=10.82%

18.

Օրինակ 6. Վարկ միանվագ այլ վճարումներով վարկի ստացման պահին	
18.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին նույն գումարն է յուրաքանչյուր ամիս) Ժամկետ՝ 1 տարի Այլ վճարումներ (վարկի ստացման օրը)՝ ➲ Փաստաթղթերի պատրաստման համար միանվագ վճար՝ 5000 դրամ ➲ Վարկի սպասարկման համար միանվագ վճար՝ 1000 դրամ:
18.2. Հաշվարկ	➲ N=13, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է և մյուս 12-ը՝ մայր գումարի և տոկոսների վճարումներն են: ➲ Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =5000+1000=6000 $500{,}000 = \frac{6{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{43{,}950.49}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{43{,}950.49}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{43{,}950.49}{(1+i)^{\frac{365}{365}}}$ i=13.01% (SՓS=0.1301*100=13.01%)

18.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	6000			6000
2	30		4,109.59	39,840.90	43,950.49
3	61		3,908.20	40,042.29	43,950.49
4	92		3,568.12	40,382.37	43,950.49
5	120		2,913.03	41,037.46	43,950.49
6	151		2,876.60	41,073.88	43,950.49
7	181		2,446.22	41,504.27	43,950.49
8	212		2,175.26	41,775.23	43,950.49
9	242		1,761.73	42,188.76	43,950.49
10	273		1,462.14	42,488.35	43,950.49
11	304		1,101.28	42,849.21	43,950.49
12	334		713.57	43,236.92	43,950.49
13	365		370.13	43,580.35	43,950.49
Ընդամենը		6000	27,405.86	500,000	533,405.86

19.

Օրինակ 7. Վարկ՝ այլ փոփոխական վճարումներով վարկի սպասարկման ընթացքում	
19.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 3 000 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին նույն գումարն է յուրաքանչյուր ամիս) Ժամկետ՝ 2 տարի Այլ վճարումներ՝ ➲ Գնահատման միանվագ վճար վարկի ստացման պահին՝ 15000 դրամ ➲ Սպասարկման միանվագ վճար վարկի ստացման պահին՝ 3000 դրամ ➲ Փաստաթղթերի պատրաստման միանվագ վճար վարկի ստացման պահին՝ 5000 դրամ

	➲ Վարկի սպասարկման վճար ամենամսյա՝ 1000 դրամ (ընդհանուր 24,000 դրամ) ➲ Ապահովագրական տարեկան վճար՝ գույքի արժեքի 2.5%-ի չափով, որից մեկ վճարը (3,000,000 * 0.025=75,000 դրամ) կատարվում է վարկի ստացման օրը, իսկ մյուս վճարը (մեքենայի մաշվածքը հաշվի առած արժեքը՝ 2 700 000 դրամ * 0.025 = 67500 դրամ) կատարվում է հաջորդ տարի՝ n=13-րդ մարմանը հաջորդող 10-րդ օրը:

19.2. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	98,000			98000
2	31	1000	25,479.45	112,925.24	139,404.69
3	59	1000	22,147.42	116,257.27	139,404.69
4	90	1000	23,532.97	114,871.72	139,404.69
5	120	1000	21,829.69	116,575.00	139,404.69
6	151	1000	21,567.26	116,837.43	139,404.69
7	181	1000	19,911.23	118,493.46	139,404.69
8	212	1000	19,568.56	118,836.13	139,404.69
9	243	1000	18,559.26	119,845.43	139,404.69
10	273	1000	16,975.55	121,429.14	139,404.69
11	304	1000	16,510.08	121,894.61	139,404.69
12	334	1000	14,975.63	123,429.07	139,404.69
13	365	1000	14,426.51	123,978.18	139,404.69
14	375	67,500			67,500.00
15	396	1000	13,373.55	125,031.15	139,404.69
16	424	1000	11,120.19	127,284.50	139,404.69
17	455	1000	11,230.59	127,174.10	139,404.69
18	485	1000	9,823.05	128,581.64	139,404.69
19	516	1000	9,058.42	129,346.27	139,404.69
20	546	1000	7,703.09	130,701.60	139,404.69
21	577	1000	6,849.79	131,554.90	139,404.69
22	608	1000	5,732.48	132,672.21	139,404.69
23	638	1000	4,457.10	133,947.59	139,404.69
24	669	1000	3,468.04	134,936.66	139,404.69
25	699	1000	2,247.10	136,157.60	139,404.69
26	730	1000	1,165.59	137,239.10	139,404.69
Ընդամենը		189,500	321,712.61	3,000,000	3,511,212.61

19.3. Հաշվարկ	➲ N=26, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է, մեկը երկրորդ տարվա ապահովագրական վճարը, իսկ մնացած 24-ը՝ մայր գումարի, տոկոսների և վարկի սպասարկման ընթացքում կատարվող այլ վճարումներն են, որոնք նախատեսված են միաժամանակ կատարել ամեն ամիս: ➲ Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =15,000+3,000+5,000+75,000=98,000 $3{,}000{,}000 = \frac{98{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{139{,}404.69}{(1+i)^{\frac{31}{365}}} + \frac{139{,}404.69}{(1+i)^{\frac{59}{365}}} + \cdots + \frac{139{,}404.69}{(1+i)^{\frac{730}{365}}}$ i=17.37% (SΦS=0.1737*100=17.37%)

20.

Օրինակ 8. Կարճաժամկետ վարկ	
20.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 800 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 10%, եթե սպառողը հանդիսանում է կրեդիտավորողի կողմից հիմնադրած որևէ միության անդամ, և 25%, եթե սպառողը չի հանդիսանում այդ միության անդամ Մարում՝ եռամսյակային հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին նույն գումարն է յուրաքանչյուր ամիս) Ժամկետ՝ 9 ամիս Այլ վճարումներ՝ ➲ Միանվագ վճար՝ 3,000 դրամ ➲ Սպասարկման վճար՝ յուրաքանչյուր եռամսյակ 2,000 դրամ ➲ Միությանը անդամակցելու միանվագ վճար՝ 20,000*9/12=15,000 դրամ

20.2. Հաշվարկ	➲ Վարկառուն հանդիսանում է միության անդամ ➲ N=4, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է և մյուս 3-ը՝ մայր գումարի և տոկոսների ամսական վճարներն են ➲ Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =3,000+15,000=18,000 $800{,}000 = \frac{18{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{282{,}073.18}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{282{,}073.18}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{282{,}073.18}{(1+i)^{\frac{273}{365}}}$ i=17.27%: (SΦS=0.1727*100=17.27%)

20.3. Մարման Գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	18,000	0	18,000	18,000
2	92	2,000.00	20,164.38	259,908.80	282,073.18
3	181	2,000.00	13,169.35	266,903.84	282,073.18
4	273	2,000.00	6,885.82	273,187.36	282,073.18
Ընդամենը		24,000	40,219.55	800,000.00	846,219.55

21.

Օրինակ 9. Վարկային գիծ (Օվերդրաֆտ)	
21.1. Վարկի պայմաններ	Տեսակ՝ վերականգնվող Գումար՝ 1 500 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 20% Մարում՝ մայր գումարի և տոկոսագումարների մարումը ամբողջությամբ ժամկետի վերջում Ժամկետ՝ 12 ամիս Արտոնյալ ժամանակահատված՝ նախատեսված չէ Նվազագույն ամսեկան մարման/համալրման սահմանաչափ (կամ շարժ)՝ վարկի 10% Սպասարկման վճար՝ 5000 դրամ տարեկան Կանխիկացման միջնորդավճարը բանկի բանկոմատներում՝ 3%:

21.2. Հաշվարկ	➲ 1-ին անգամ վարկը ամբողջությամբ կանխիկացնելու դեպքում կանխիկացման գումարը կլինի 45 000 դրամ (1,500,000*0.03) ➲ Քանի որ վարկային գիծը վերականգնվող է, ենթադրվում է, որ ամենամսյա նվազագույն մարման սահմանաչափով մուտքագրված գումարը (1,500,000*0.1 = 150 000 դրամ) կրկին օգտագործվելու է ամբողջությամբ: Լրացուցիչ կանխիկացումները չեն դիտարկվում որպես տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման գործոն ➲ Այսպիսով՝ վարկի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ Ki = 5,000+45,000=50,000 դրամ: $1{,}500{,}000 = \frac{50{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{1{,}800{,}000}{(1+i)^{\frac{365}{365}}}$ i=24.14% (SΦS=0.2414*100=24.14%)

21.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	50,000	0	0	50,000
2	31	0	0	0	0
3	59	0	0	0	0
4	90	0	0	0	0
5	120	0	0	0	0
6	151	0	0	0	0
7	181	0	0	0	0
8	212	0	0	0	0
9	243	0	0	0	0
10	273	0	0	0	0
11	304	0	0	0	0
12	334	0	0	0	0
13	365	0	300,000	1,500,000	1,800,000
Ընդամենը			300,000	1,500,000	1,850,000

22.

Օրինակ 12. Վերականգնվող վարկային գիծ՝ օգտագործված մասի և տոկոսագումարների ամենամսյա վճարումներով	
22.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 750 000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 15% Մարում՝ օգտագործված մասի 10% և տոկոսագումարների ամենամսյա վճարումներով Կանխիկացում՝ 1% Այլ վճարումներ՝ ➲ վարկի տրամադրման միանվագ վճար մայր գումարի 1,5% (կնքման պահին՝ 11250 դրամ) ➲ վարկի սպասարկման տարեկան վճար՝ 5000 դրամ

22.2. Հաշվարկ	➲ Հաշվի առնելով վարկի առանձնահատկությունները այս պարագայում վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի ընդունելով, որ վարկառուն վարկի գումարը կանխիկացնում է միանգամից և ամբողջությամբ, հաշվարկի նպատակով կիրառվող ժամկետը 1 տարի է (մարվելու է 1 տարվա ընթացքում), ամենամսյա նվազագույն մարման սահմանաչափով մուտքագրված գումարը կրկին օգտագործվելու է ամբողջությամբ, լրացուցիչ կանխիկացումները չեն դիտարկվում որպես տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման գործոն: Արդյունքում՝ կստանանք հետևյալ ցուցանիշները՝ Վարկային գծի կանխիկացման վճար՝ 7500 դրամ: $750{,}000 = \frac{11250+5000+7500}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{9{,}554.79}{(1+i)^{\frac{31}{365}}} + \cdots + \frac{759{,}554.79}{(1+i)^{\frac{365}{365}}}$ i=20.14% (SΦS=0.2014*100=20.14%)

22.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	23,750	0	0	23,750.00
2	31	0	9,554.79		9,554.79
3	59	0	8,630.14		8,630.14
4	90	0	9,554.79		9,554.79
5	120	0	9,246.58		9,246.58
6	151	0	9,554.79		9,554.79
7	181	0	9,246.58		9,246.58
8	212	0	9,554.79		9,554.79
9	243	0	9,554.79		9,554.79
10	273	0	9,246.58		9,246.58
11	304	0	9,554.79		9,554.79
12	334	0	9,246.58		9,246.58
13	365	0	9,554.79	750,000	759,554.79
Ընդամենը		23,750	112,500	750,000	886,250

23.

Օրինակ 10. Արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական վարկ	
23.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 2000 ԱՄՆ դոլար Անվանական տոկոսադրույք՝ 11% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ Ժամկետ՝ 18 ամիս Այլ վճարումներ՝ ➲ Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 դրամ ➲ վարկի տրամադրման միանվագ վճար մայր գումարի 4% (կնքման պահին) ➲ վարկի սպասարկման ամսական վճար՝ 2000 դրամ ԱՄՆ դոլարի ԿԲ հաշվարկային փոխարժեքը կազմում է 475 դրամ

23.2. Հաշվարկ	➲ Հաշվի առնելով վարկի պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, որ արտարժույթով արտահայտված մեծությունները փոխարկվում են վարկի տրամադրման (ձևակերպման) օրվա ԿԲ հաշվարկային փոխարժեքով՝ կստանանք հետևյալ ցուցանիշները՝ Տրամադրվող վարկի մեծություն՝ 2000*475=950,000 դրամ Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 2000*4/100*475=38,000 դրամ: $950{,}000 = \frac{5000+38{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{59{,}477.14}{(1+i)^{\frac{31}{365}}} + \frac{59{,}477.14}{(1+i)^{\frac{59}{365}}} + \cdots + \frac{59{,}477.14}{(1+i)^{\frac{546}{365}}}$ i=24.06% (ՏՓՏ=0.2406*100=24.06%)

23.3.

Մարումների հաճախա-կանություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	43,000	0	0	43,000.00
2	31	2000	8,875.34	48,601.80	59,477.14
3	59	2000	7,606.32	49,870.83	59,477.14
4	90	2000	7,955.37	49,521.78	59,477.14
5	120	2000	7,251.01	50,226.13	59,477.14
6	151	2000	7,023.47	50,453.67	59,477.14
7	181	2000	6,340.75	51,136.39	59,477.14
8	212	2000	6,074.37	51,402.77	59,477.14
9	243	2000	5,594.14	51,883.00	59,477.14
10	273	2000	4,944.61	52,532.54	59,477.14
11	304	2000	4,618.64	52,858.50	59,477.14
12	334	2000	3,991.76	53,485.39	59,477.14
13	365	2000	3,625.13	53,852.01	59,477.14
14	396	2000	3,122.02	54,355.12	59,477.14
15	424	2000	2,361.22	55,115.92	59,477.14
16	455	2000	2,099.29	55,377.85	59,477.14
17	485	2000	1,530.90	55,946.25	59,477.14
18	516	2000	1,059.25	56,417.90	59,477.14
19	546	2000	515.00	56,962.14	59,477.14
Ընդամենը		79,000	84,588.60	950,000	1,113,588.60

24.

Օրինակ 11. Փուլային վարկ գյուղատնտեսական նպատակով	
24.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 2000 ԱՄՆ դոլար Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ մայր գումարը վճարվում է ժամկետի վերջում, իսկ տոկոսագումարները և վարկի ամսական սպասարկման վճարները յուրաքանչյուր ամիս հավասարաչափ Ժամկետ՝ 24 ամիս Այլ վճարումներ՝ ➲ Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 դրամ ➲ վարկի տրամադրման միանվագ վճար մայր գումարի 4% (կնքման պահին) ➲ վարկի սպասարկման ամսական վճար՝ 2000 դրամ Վարկառուին գումարը տրվում է փուլերով 1-ին տարին նրան հասանելի է լինելու 1000 ԱՄՆ դոլար, 2-րդ տարին նրան հասանելի է լինելու ևս 1000 ԱՄՆ դոլար: ԱՄՆ դոլարի ԿԲ հաշվարկային փոխարժեքը կազմում է 475 դրամ

24.2. Հաշվարկ	➲ Հաշվի առնելով վարկի պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, որ արտարժույթով արտահայտված մեծությունները փոխարկվում են վարկի տրամադրման (ձևակերպման) օրվա ԿԲ հաշվարկային փոխարժեքով՝ կստանանք հետևյալ ցուցանիշները՝ Տրամադրվող վարկի մեծություն՝ 2000*475=950000 դրամ, Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 2000*4/100*475=38000 դրամ: ➲ Հաշվի առնելով վարկի առանձնահատկությունները (արտոնյալ ժամանակահատված) այս պարագայում վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի ընդունելով, որ վարկառուն անմիջապես կանխիկացնում է վարկային գիծը դրա հասանելի լինելու պահից սկսած՝ 1000 ԱՄՆ դոլար պայմանագրի կնքման պահին և 1000 ԱՄՆ դոլար հաջորդ տարի նույն ամսաթվին: $950{,}000 = \frac{5000+38{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{6{,}034.25}{(1+i)^{\frac{31}{365}}} + \frac{5{,}643.84}{(1+i)^{\frac{59}{365}}} + \cdots + \frac{960{,}068.49}{(1+i)^{\frac{730}{365}}}$ i=12.94% (SΦS=0.1294*100=12.94%)

24.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	43000	0	0	43,000.00
2	31	2000	4,034.25	0	6,034.25
3	59	2000	3,643.84	0	5,643.84
4	90	2000	4,034.25	0	6,034.25
5	120	2000	3,904.11	0	5,904.11
6	151	2000	4,034.25	0	6,034.25
7	181	2000	3,904.11	0	5,904.11
8	212	2000	4,034.25	0	6,034.25
9	243	2000	4,034.25	0	6,034.25
10	273	2000	3,904.11	0	5,904.11
11	304	2000	4,034.25	0	6,034.25
12	334	2000	3,904.11	0	5,904.11
13	365	2000	4,034.25	0	6,034.25
14	396	2000	4,034.25	0	6,034.25
15	424	2000	7,287.67	0	9,287.67
16	455	2000	8,068.49	0	10,068.49
17	485	2000	7,808.22	0	9,808.22
18	516	2000	8,068.49	0	10,068.49
19	546	2000	7,808.22	0	9,808.22
20	577	2000	8,068.49	0	10,068.49
21	608	2000	8,068.49	0	10,068.49
22	638	2000	7,808.22	0	9,808.22
23	669	2000	8,068.49	0	10,068.49
24	699	2000	7,808.22	0	9,808.22
25	730	2000	8,068.49	950,000	960,068.49
Ընդամենը		91,000	138,465.75	950,000	1,179,465.75

25.

Օրինակ 11. Գյուղատնտեսական վարկ եռամսյակային մարումով	
25.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 2000 ԱՄՆ դոլար Անվանական տոկոսադրույք՝ 10% Մարում՝ եռամսյակային հավասարաչափ Ժամկետ՝ 18 ամիս Այլ վճարումներ՝ ➲ Վարկային հայտի ուսումնասիրության վճար՝ 5000 դրամ ➲ վարկի տրամադրման միանվագ վճար մայր գումարի 4% (կնքման պահին) ➲ վարկի սպասարկման ամսական վճար՝ 2000 դրամ ԱՄՆ դոլարի ԿԲ հաշվարկային փոխարժեքը կազմում է 475 դրամ

25.2. Հաշվարկ	➲ Հաշվի առնելով վարկի պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, որ արտարժույթով արտահայտված մեծությունները փոխարկվում են վարկի տրամադրման (ձևակերպման) օրվա ԿԲ հաշվարկային փոխարժեքով՝ կստանանք հետևյալ ցուցանիշները՝ Տրամադրվող վարկի մեծություն՝ 2000*475=950000 դրամ Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 2000*4/100*475=38000 դրամ: $950{,}000 = \frac{5000+38{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{174{,}424.40}{(1+i)^{\frac{90}{365}}} + \cdots + \frac{174{,}424.40}{(1+i)^{\frac{546}{365}}}$ i=18.18% (ՏՓՏ=0.1818*100=18.18%)

25.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
0	0	43,000	0	0	43,000.00
1	90	2000	23,424.66	148,999.75	174,424.40
2	181	2000	19,970.14	152,454.26	174,424.40
3	273	2000	16,346.91	156,077.49	174,424.40
4	365	2000	12,412.90	160,011.50	174,424.40
5	455	2000	8,197.57	164,226.83	174,424.40
6	546	2000	4,194.23	168,230.17	174,424.40
Ընդամենը		55,000	84,546.42	950,000	1,089,546.42

26.

Օրինակ 13. Հիպոտեկային վարկ դրամով, հաստատուն տոկոսադրույքով	
26.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 15,000,000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 12% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ Ժամկետ՝ 120 ամիս Այլ վճարումներ՝ ➲ հայտի ուսումնասիրության վճար՝ 10,000 դրամ ➲ գրավի գնահատման վճար՝ 20,000 դրամ ➲ կադաստրի տեղեկանքի վճար՝ 10,000 դրամ ➲ նոտարական ծառայությունների վճար՝ 15,000 դրամ ➲ վարկի տրամադրման միանվագ վճար՝ 75,000 ➲ ապահովագրություն՝ տարեկան 45,000 դրամ

26.2. Հաշվարկ	N=121, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է և մյուս 120-ը՝ մայր գումարի և տոկոսների վճարումներն են: Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ գույքը վարկով կամ առանց վարկ ձեռք բերելու հանգամանքից անկախ (օրինակ՝ կադաստրի կամ նոտարի վճար), չեն ներառվում SΦS-ի հաշվարկի մեջ: Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =10,000+20,000+75,000+45,000=150,000 դրամ $15{,}000{,}000 = \frac{150{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{218{,}531.12}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{218{,}531.12}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{218{,}531.12}{(1+i)^{\frac{3652}{365}}}$ i=13.39% (SΦS=0.1339*100=13.39%)

26.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	150,000	0	0	150,000
2	30	0	147,945.21	70,618.65	218,563.86
3	61	0	152,156.98	66,406.87	218,563.86
4	92	0	151,480.18	67,083.68	218,563.86
5	120	0	136,203.27	82,360.59	218,563.86
6	151	0	149,957.07	68,606.78	218,563.86
7	181	0	144,443.08	74,120.78	218,563.86
8	212	0	148,502.43	70,061.43	218,563.86
9	242	0	143,021.01	75,542.85	218,563.86
10	273	0	147,018.46	71,545.40	218,563.86
11	304	0	146,289.29	72,274.57	218,563.86
12	334	0	140,857.43	77,706.43	218,563.86
13	365	45,000	144,760.71	28,803.15	218,563.86
14	395	0	139,806.93	78,756.93	218,563.86
15	426	0	143,664.48	74,899.37	218,563.86
16	457	0	142,901.12	75,662.73	218,563.86
17	485	0	128,375.47	90,188.38	218,563.86
18	516	0	141,210.81	77,353.05	218,563.86
19	546	0	135,892.69	82,671.17	218,563.86
...					218,563.86
119	3591	0	6,550.14	212,013.72	218,563.86
120	3621	0	4,247.75	214,316.10	218,563.86
121	3652	0	2,205.08	216,358.78	218,563.86
Ընդամենը		555,000	10,822,663	15,000,000	26,377,663

27.

Օրինակ 14. Հիպոտեկային վարկ դրամով, ոչ հավասարաչափ	
27.1 Վարկի պայմաններ	Գումար՝ 15,000,000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 12% Մարում՝ մայր գումարը հավասարաչափ է, սակայն տոկոսները անհավասարաչափ Ժամկետ՝ 120 ամիս Այլ վճարումներ՝ ➲ հայտի ուսումնասիրության վճար՝ 10,000 դրամ ➲ գրավի գնահատման վճար՝ 20,000 դրամ

	➲ վարկի տրամադրման միանվագ վճար՝ 75,000 ➲ կադաստրի տեղեկանք՝ 10,000 դրամ ➲ նոտարական ծառայությունների վճար՝ 15,000 դրամ ➲ ապահովագրություն՝ տարեկան 45,000 դրամ

27.2. Հաշվարկ	N=121, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է և մյուս 120-ը՝ մայր գումարի և տոկոսների վճարումներն են: Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ գույքը վարկով կամ առանց վարկ ձեռք բերելու հանգամանքից անկախ (օրինակ՝ կադաստրի կամ նոտարի վճար), չեն ներառվում SΦS-ի հաշվարկի մեջ: Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =10,000+20,000+75,000+45,000=150,000 դրամ $15{,}000{,}000 = \frac{150{,}000}{\frac{0}{(1+i)^{365}}} + \frac{272{,}945.21}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{276{,}602.74}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{126{,}273.97}{(1+i)^{\frac{3652}{365}}}$ i=13.50% (SΦS=0.1350*100=13.50%)

27.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	150,000	0	0	150,000
2	30	0	147,945.21	125,000.00	272,945.21
3	61	0	151,602.74	125,000.00	276,602.74
4	92	0	150,328.77	125,000.00	275,328.77
5	120	0	134,630.14	125,000.00	259,630.14
6	151	0	147,780.82	125,000.00	272,780.82
7	181	0	141,780.82	125,000.00	266,780.82
8	212	0	145,232.88	125,000.00	270,232.88
9	242	0	139,315.07	125,000.00	264,315.07
10	273	0	142,684.93	125,000.00	267,684.93
11	304	0	141,410.96	125,000.00	266,410.96
12	334	0	135,616.44	125,000.00	260,616.44
13	365	45,000	138,863.01	125,000.00	308,863.01
14	395	0	133,150.68	125,000.00	258,150.68
15	426	0	136,315.07	125,000.00	261,315.07
16	457	0	135,041.10	125,000.00	260,041.10
17	485	0	120,821.92	125,000.00	245,821.92
18	516	0	132,493.15	125,000.00	257,493.15
19	546	0	126,986.30	125,000.00	251,986.30
...					
119	3591	0	3,821.92	125,000.00	128,821.92
120	3621	0	2,465.75	125,000.00	127,465.75
121	3652	0	1,273.97	125,000.00	126,273.97
Ընդամենը		555,000	9,076,603	15,000,000	24,631,603

28.

Օրինակ 15. Հիպոտեկային վարկ արտարժույթով, հաստատուն տոկոսադրույքով	
28.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 40,000 ԱՄՆ դոլար Անվանական տոկոսադրույք՝ 9% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ Ժամկետ՝ 120 ամիս Այլ վճարումներ՝ ➲ հայտի ուսումնասիրության վճար՝ 10,000 դրամ ➲ գրավի գնահատման վճար՝ 20,000 դրամ ➲ վարկի տրամադրման միանվագ վճար՝ մայր գումարի 1 տոկոս (կնքման պահին) ➲ կադաստրի տեղեկանք՝ 10,000 դրամ ➲ նոտարական ծառայությունների վճար՝ 15,000 դրամ ➲ ապահովագրություն՝ տարեկան 45,000 դրամ ԱՄՆ դոլարի ԿԲ հաշվարկային փոխարժեքը կազմում է 475 դրամ

28.2. Հաշվարկ	Հաշվի առնելով վարկի պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, որ արտարժույթով արտահայտված մեծությունները փոխարկվում են վարկի տրամադրման (ձևակերպման) օրվա ԿԲ հաշվարկային փոխարժեքով՝ կստանանք հետևյալ ցուցանիշները՝ Տրամադրվող վարկի մեծություն՝ 40,000*475=19,000,000 դրամ, Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 40,000*1/100*475=190,000 դրամ: Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ գույքը վարկով կամ առանց վարկ ձեռք բերելու հանգամանքից անկախ (օրինակ՝ կադաստրի կամ նոտարի վճար), չեն ներառվում SΦS-ի հաշվարկի մեջ: Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =10,000+20,000+190,000+45,000=265,000 դրամ $19{,}000{,}000 = \frac{265{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{224{,}218.82}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{224{,}218.82}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{224{,}218.82}{(1+i)^{\frac{3652}{365}}}$ i=10,1% (SΦS=0.101*100=10.1%)

28.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	265,000	0	0	265,000
2	30	0	140,547.95	103,508.92	244,056.86
3	61	0	144,441.67	99,615.19	244,056.86
4	92	0	143,680.23	100,376.63	244,056.86
5	120	0	129,082.68	114,974.18	244,056.86
6	151	0	142,034.12	102,022.74	244,056.86
7	181	0	136,697.69	107,359.17	244,056.86
8	212	0	140,433.64	103,623.22	244,056.86
9	242	0	135,137.00	108,919.86	244,056.86
10	273	0	138,809.00	105,247.86	244,056.86
11	304	0	138,004.50	106,052.36	244,056.86
12	334	0	132,768.25	111,288.62	244,056.86
13	365	45,000	136,343.18	62,713.68	244,056.86

14	395	0	131,481.11	112,575.76	244,056.86
...					244,056.86
119	3591	0	5,513.01	238,543.85	244,056.86
120	3621	0	3,570.60	240,486.26	244,056.86
121	3652	0	1,851.38	242,205.48	244,056.86
Ընդամենը		670,000	9,881,823	19,000,000	29,551,823

29.

Օրինակ 16. Հիպոտեկային վարկ արտարժույթով, լողացող տոկոսադրույքով	
29.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 40,000 ԱՄՆ դոլար Անվանական տոկոսադրույք՝ 7% + 1 տարվա ԼԻԲՈՐ տոկոսադրույք, որը տրման պահին կազմում է 3% Մարում՝ ամենամսյա հավասարաչափ Ժամկետ՝ 120 ամիս Այլ վճարումներ՝ ➲ հայտի ուսումնասիրության վճար՝ 10,000 դրամ ➲ գրավի գնահատման վճար՝ 20,000 դրամ ➲ Վարկի տրամադրման միանվագ վճար՝ մայր գումարի 1 տոկոս (կնքման պահին) ➲ կադաստրի տեղեկանք՝ 10,000 դրամ ➲ ապահովագրություն՝ տարեկան 45,000 դրամ ԱՄՆ դոլարի ԿԲ հաշվարկային փոխարժեքը կազմում է 475 դրամ

29.2. Հաշվարկ	➲ Հաշվի առնելով վարկի պայմանները, ինչպես նաև այն հանգամանքը, որ արտարժույթով արտահայտված մեծությունները փոխարկվում են վարկի տրամադրման (ձևակերպման) օրվա ԿԲ հաշվարկային փոխարժեքով՝ կստանանք հետևյալ ցուցանիշները՝ Տրամադրվող վարկի մեծություն՝ 40,000*475=19,000,000 դրամ, Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 40,000*1/100*475=190,000 դրամ: Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ գույքը վարկով կամ առանց վարկ ձեռք բերելու հանգամանքից անկախ (օրինակ՝ կադաստրի կամ նոտարի վճար), չեն ներառվում ՏՓՏ-ի հաշվարկի մեջ: ➲ Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =10,000+20,000+190,000+45,000=265,000 դրամ $19{,}000{,}000 = \frac{265000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{257{,}455.42}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{257{,}455.42}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{257{,}455.42}{(1+i)^{\frac{3652}{365}}}$ i=11,19% (ՏՓՏ=0.1119*100=11,19%) ➲ Ենթադրենք տոկոսադրույքը փոփոխվել է հետևյալ կերպ՝ • 1-60 ամիսների համար կազմել է 10% • 61-120 ամիսների համար կազմել է 13% Եթե կրեդիտավորողը 110-րդ ամսին պահանջի հաշվարկել և իրեն տրամադրել նոր ՏՓՏ, այն կկազմի՝ 11.86%: $19{,}000{,}000 = \frac{265{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{254{,}455.42}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{254{,}455.42}{(1+i)^{\frac{61}{365}}} \ldots + \frac{272{,}269.44}{(1+i)^{\frac{3652}{365}}}$

29.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	265,000	0	0	265,000
2	30	0	156,164.38	98,291.04	254,455.42
3	61	0	160,535.06	93,920.36	254,455.42
4	92	0	159,737.38	94,718.04	254,455.42
5	120	0	143,552.32	110,903.10	254,455.42
6	151	0	157,991.01	96,464.41	254,455.42
7	181	0	152,101.67	102,353.75	254,455.42
8	212	0	156,302.42	98,153.00	254,455.42
9	242	0	150,453.67	104,001.75	254,455.42
10	273	0	154,585.49	99,869.93	254,455.42
11	304	0	153,737.28	100,718.14	254,455.42
12	334	0	147,950.19	106,505.23	254,455.42
13	365	45,000	151,977.30	57,478.12	254,455.42
14	395		146,602.38	107,853.04	254,455.42
...					
119	3591	0	8,824.98	263,444.47	272,269.44
120	3621	0	5,725.42	266,544.03	272,269.44
121	3652	0	2,973.32	269,296.12	272,269.44
Ընդամենը		670,000	12,198,492	19,000,000	31,868,492

30.

Օրինակ 13. Ծրագրային հիպոտեկային վարկ դրամով, հաստատուն տոկոսադրույքով	
30.1. Վարկի պայմաններ	Գումար՝ 15,000,000 դրամ Անվանական տոկոսադրույք՝ 12%, որից սուբսիդավորվում է 4%-ը Մարում՝ ամենամսյա հավասարաչափ Ժամկետ՝ 120 ամիս Այլ վճարումներ՝ ➲ հայտի ուսումնասիրության վճար՝ 10,000 դրամ ➲ գրավի գնահատման վճար՝ 20,000 դրամ ➲ Կադաստրի տեղեկանքի վճար՝ 10,000 դրամ ➲ Նոտարական ծառայությունների վճար՝ 15,000 դրամ ➲ Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 75,000 ➲ Ապահովագրություն՝ տարեկան 45,000 դրամ

30.2. Հաշվարկ	N=121, որից մեկ վճարումը կրեդիտի ստացման պահին վճարն է և մյուս 120-ը՝ մայր գումարի և տոկոսների վճարումներն են: ՏՓՏ-ի հաշվարկում որպես կրեդիտի տարեկան անվանական տոկոսադրույք հիմք է ընդունվում 8%-ը, քանի որ 12%-ից 4%-ը սուբսիդավորվում է: Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ գույքը վարկով կամ առանց վարկ ձեռք բերելու հանգամանքից անկախ (օրինակ՝ կադաստրի կամ նոտարի վճար), չեն ներառվում ՏՓՏ-ի հաշվարկի մեջ: Կրեդիտի ստացման պահին կատարվող այլ վճարումները (K1) ստացվում է՝ K1 =10,000+20,000+75,000+45,000=150,000 դրամ $15{,}000{,}000 = \frac{150{,}000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{185{,}365.71}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{185{,}365.71}{(1+i)^{\frac{61}{365}}} + \cdots + \frac{185{,}365.71}{(1+i)^{\frac{3652}{365}}}$ i=9.01% (ՏՓՏ=0.0901*100=9.01%)

30.3. Մարման գրաֆիկ

Մարումների հաճախակա-նություն՝ n	Ստացումից մինչև հերթական մարումը ընկած օրերի թիվը՝ Dn	Այլ վճարներ	Մարվող տոկոսագու-մարներ	Մայր գումարի մարումներ	Մարման հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	0	150,000	0	0	150,000
2	30	0	98,630.14	86,735.58	185,365.71
3	61	0	101,328.48	84,037.23	185,365.71
4	92	0	100,757.49	84,608.22	185,365.71
5	120	0	90,487.52	94,878.19	185,365.71
6	151	0	99,537.96	85,827.75	185,365.71
7	181	0	95,762.72	89,603.00	185,365.71
8	212	0	98,346.00	87,019.72	185,365.71
9	242	0	94,601.36	90,764.35	185,365.71
10	273	0	97,138.04	88,227.67	185,365.71
11	304	0	96,538.57	88,827.14	185,365.71
12	334	0	92,840.36	92,525.35	185,365.71
13	365	45,000	95,306.37	45,059.34	185,365.71
14	395	0	91,935.69	93,430.02	185,365.71
15	426	0	94,365.40	91,000.31	185,365.71
16	457	0	93,747.10	91,618.61	185,365.71
17	485	0	84,112.54	101,253.18	185,365.71
18	516	0	92,436.63	92,929.09	185,365.71
19	546	0	88,843.76	96,521.95	185,365.71
...					185,365.71
119	3591	0	3,728.18	181,637.53	185,365.71
120	3621	0	2,413.59	182,952.12	185,365.71
121	3652	0	1,250.97	184,114.74	185,365.71
Ընդամենը		555,000	6,838,886	15,000,000	22,393,886

»:

*«Ֆինանսական կազմակերպությունների կողմից «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգի օգտագործման և համակարգում տվյալների լրացման կանոններ» կանոնակարգ 8/03.2-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասը,

նպատակ ունենալով սահմանել ֆինանսական կազմակերպությունների կողմից «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգի օգտագործման և համակարգում տվյալների լրացման կանոնները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել «Ֆինանսական կազմակերպությունների կողմից «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգի օգտագործման և համակարգում տվյալների լրացման կանոններ» կանոնակարգ 8/03.2-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
22 հունվարի 2020 թ., N 3-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունվարի 17-ին (ՀՀԳՏ N4 (672)[1], 07.02.2020):

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունվարի 17-ի թիվ 3-Ն որոշմամբ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/03.2

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ֆինանսական կազմակերպությունների համար «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգի օգտագործման և համակարգում տվյալների լրացման կանոնները:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***«Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգ (այսուհետ՝ Համակարգ)*** – Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից ստեղծված և https://www.fininfo.am էլեկտրոնային հասցեով հասանելի միասնական էլեկտրոնային համակարգ, որը սպառողներին հնարավորություն է տալիս որոնել և համեմատել ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների պայմանները:
2) ***Համակարգի ադմինիստրավորման պորտալ (այսուհետ՝ Պորտալ)*** – https://karavarich.fininfo.am էլեկտրոնային հասցեով հասանելի կայք, որն ապահովում է Համակարգի ադմինիստրավորումը:
3) ***Ֆինանսական կազմակերպություն*** - Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ և օտարերկրյա բանկի մասնաճյուղ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղ, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպություն:
4) ***Ծառայություններ*** – Ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող սպառողական, գյուղատնտեսական, հիպոտեկային, վերաֆինանսավորման, առցանց (օնլայն) տրամադրվող վարկեր, ավանդներ, վճարային քարտեր, դրամական փոխանցումներ և աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն:
5) ***Տվյալ*** – Ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն:
6) ***Մուտքագրում*** – Ֆինանսական կազմակերպության կողմից մեկ կամ մի քանի տվյալի մուտքագրում Պորտալում:
7) ***Խմբագրում*** – Ֆինանսական կազմակերպության կողմից Պորտալում մուտքագրված մեկ կամ մի քանի տվյալի փոփոխություն:
8) ***Հեռացում*** – Ֆինանսական կազմակերպության կողմից Պորտալում մուտքագրված մեկ կամ մի քանի տվյալի հեռացում:
9) ***Հաստատում*** – Պորտալում ֆինանսական կազմակերպության կողմից մուտքագրված, խմբագրված և հեռացված տվյալների հաստատում, որի արդյունքում այդ տվյալները հրապարակվում են Համակարգում:
10) ***Մերժում*** - Պորտալում ֆինանսական կազմակերպության կողմից մուտքագրված, խմբագրված և հեռացված տվյալների մերժում, որի արդյունքում այդ տվյալները չեն հրապարակվում Համակարգում:

11) ***Նկատառումների ուղարկում*** - Պորտալում ֆինանսական կազմակերպության կողմից մուտքագրված, խմբագրված և հեռացված տվյալներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նկատառումների արձանագրում և ուղարկում:
12) ***Գրանցում*** – Պորտալում գործողություններ կատարելու իրավասությունների տրամադրում:
13) ***Հրապարակում*** – Տվյալների հրապարակում Համակարգում, որի արդյունքում այդ տվյալները հասանելի են դառնում սպառողի համար:
14) ***Սպառող*** – Բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման նպատակով, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված ֆինանսական ծառայություն ստանալ ցանկացող անձ:
15) ***Սուպերադմինիստրատոր*** – Պորտալում Կենտրոնական բանկի կողմից գրանցված ֆինանսական կազմակերպության աշխատակից, որն ունի ֆինանսական կազմակերպության սուպերխմբագիր, խմբագիր ու ադմինիստրատոր գրանցելու, ինչպես նաև ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալներ մուտքագրելու, խմբագրելու և հեռացնելու իրավասություն:
16) ***Սուպերխմբագիր*** – Պորտալում ֆինանսական կազմակերպության կողմից գրանցված ֆինանսական կազմակերպության աշխատակից, որն ունի Պորտալում ֆինանսական ծառայությունների վերաբերյալ տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, հեռացնելու և այդ գործողությունները հաստատելու իրավասություն:
17) ***Խմբագիր*** – Պորտալում ֆինանսական կազմակերպության կողմից գրանցված ֆինանսական կազմակերպության աշխատակից, որն ունի Պորտալում ֆինանսական ծառայությունների վերաբերյալ տվյալներ մուտքագրելու, խմբագրելու և հեռացնելու իրավասություն և որի իրավասության շրջանակում կատարված գործողությունները ենթակա են հաստատման նույն ֆինանսական կազմակերպության ադմինիստրատորի կողմից:
18) ***Ադմինիստրատոր*** – Պորտալում ֆինանսական կազմակերպության կողմից գրանցված ֆինանսական կազմակերպության աշխատակից, որն ունի Պորտալում խմբագրի կողմից մուտքագրված, խմբագրված և հեռացված ֆինանսական ծառայությունների տվյալները հաստատելու, մերժելու և նկատառումներ ուղարկելու իրավասություն:
19) ***Առցանց (օնլայն) տրամադրվող վարկ*** – Ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվող սպառողական վարկ, որը սպառողին տրամադրվում է առցանց տարբերակով (ինտերնետային կայք, բջջային հավելվածներ):
20) ***Վերաֆինանսավորման վարկ*** – Ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվող վարկ, որի նպատակն է միավորել կամ նոր պայմաններով վերավարկավորել սպառողի ընթացիկ վարկային պարտավորությունները:

ԳԼՈՒԽ 3. «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքի ծառայությունների էջում Համակարգին հղում դնելիս Համակարգում ֆինանսական կազմակերպությունների կողմից տվյալները մուտքագրվում, հրապարակվում և թարմացվում են համաձայն սույն Կանոնակարգի:

Համակարգում ծառայությունների վերաբերյալ տվյալների մուտքագրումը, Համակարգում ծառայությունների վերաբերյալ տվյալների հրապարակումը և թարմացումը իրականացվում են Պորտալում տվյալների մուտքագրման միջոցով:

4. Համակարգում ծառայությունների վերաբերյալ տվյալները մուտքագրվում, հրապարակվում և թարմացվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից:

5. Պորտալում ծառայությունների վերաբերյալ տվյալների թարմացումը կատարվում է ըստ անհրաժեշտության՝ մուտքագրված որևէ տվյալի փոփոխության, նոր տվյալի ավելացման, պակասեցման և ծառայության մատուցումը դադարեցնելու դեպքում: Ընդ որում՝ փոփոխված տվյալները Պորտալ են մուտ-

քագրվում ոչ ուշ, քան ֆինանսական կազմակերպության կողմից այդ տվյալի ուժի մեջ մտնելուց հետո 7 օրվա ընթացքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նոր տվյալ ավելացնելու տեխնիկածրագրային հնարավորության ապահովումը գտնվում է սույն իրավական ակտի 6-րդ կետով սահմանված գործընթացում:

6. Եթե ֆինանսական կազմակերպությունը ցանկանում է ծառայության մուտքագրման համար Պորտալում ավելացնել դրանում չնախատեսված որևէ նոր տվյալ, որը պահանջում է Պորտալում տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացում (օրինակ՝ լրացման նոր դաշտ, հաշվարկման նոր բանաձևի կիրառում և այլն), ապա Կենտրոնական բանկի կողմից տրամադրած Սի Բի Էյ Նեթ (CBANet) հասցեին գրություն է ուղարկում այդ մասին: Ընդ որում, ֆինանսական կազմակերպությունը գրությունը Կենտրոնական բանկ է ուղարկում ոչ ուշ, քան տվյալ ծառայության համար փոփոխությունն իր ներքին ընթացակարգերով սահմանված կարգով հաստատելուց հետո 7 օրվա ընթացքում:

Կենտրոնական բանկը ֆինանսական կազմակերպությանը պատասխան գրություն է ուղարկում, որն առնվազն ներառում է Կենտրոնական բանկի՝

1) հստակ դիրքորոշումը՝ ապահովել կամ չապահովել նոր տվյալի համար տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացումը,
2) դիրքորոշման հիմնավորումը,
3) տեխնիկածրագրային փոփոխությունների իրականացման ապահովման դեպքում վերջինիս կատարման ժամկետը՝ հնարավորության դեպքում:

7. Ֆինանսական կազմակերպությունը Պորտալում գրանցվելու համար Կենտրոնական բանկի կողմից տրամադրած Սի Բի Էյ Նեթ (CBANet) հասցեին ուղարկում է Պորտալից օգտվելու իրավասություն ստացող աշխատակցի տվյալներ, որը գրանցվում է որպես ***սուպերադմինիստրատոր***: Աշխատակցի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությունն առնվազն ներառում է աշխատակցի՝

1) անունը, ազգանունը,
2) ֆինանսական կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը,
3) աշխատանքային էլեկտրոնային փոստի հասցեն (օրինակ՝ petros.petrosyan@abcbank.am),
4) հեռախոսահամարը (ներառյալ ներքին համարը՝ առկայության դեպքում):

8. Սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված տվյալները ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը Պորտալում գրանցում է ֆինանսական կազմակերպության աշխատակցին: Աշխատակիցը, Կենտրոնական բանկ ներկայացված իր էլեկտրոնային հասցեին ստանում է Պորտալում գրանցվելու վերաբերյալ էլեկտրոնային նամակ, որի միջոցով առաջին անգամ մուտք է գործում Պորտալ և սահմանում մուտք գործելու իր գաղտնաբառը:

Պորտալում գրանցվելուց հետո աշխատակիցը Պորտալ մուտք գործելու համար օգտագործում է Կենտրոնական բանկ ներկայացրած իր էլեկտրոնային հասցեն՝ որպես ծածկանուն և իր կողմից սահմանված գաղտնաբառը:

Գաղտնաբառը մոռանալու դեպքում գաղտնաբառի վերականգնումն իրականացվում է Պորտալ մուտք գործելու էջում տեղադրված «Մոռացել եք գաղտնաբառը» կոճակի վրա սեղմելու միջոցով:

Պորտալ մուտք գործելիս սահմանված քանակով (իրար հաջորդող) սխալ ծածկանուն և գաղտնաբառ մուտքագրելիս Պորտալի մուտքը որոշակի ժամանակահատվածով բլոկավորվում է տվյալ աշխատակցի համար:

9. Սույն կարգի 7-րդ կետում նշված աշխատակցի և նրա վերաբերյալ տվյալների խմբագրումը կատարվում է ֆինանսական կազմակերպության կողմից Պորտալում նոր աշխատակցի վերաբերյալ տվյալների թարմացմամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ում ներկայացված գործողությունների:

10. Ֆինանսական կազմակերպության սուպերադմինիստրատորը Պորտալում կարող է գրանցել ծառայությունների տվյալների մուտքագրման գործընթացն ապահովող այլ աշխատակիցներ՝ որպես ***սուպերխմբագիր, խմբագիր և ադմինիստրատոր:***

11. Ֆինանսական կազմակերպությունը ինքնուրույն է որոշում Պորտալում գրանցվող աշխատակիցների թիվը՝ ելնելով սուպերխմբագիր, խմբագիր և ադմինիստրատոր գրանցելու իր աշխատանքային անհրաժեշտությունից:

Պորտալում ծառայությունների լրացման համար աշխատակիցների գրանցման հնարավոր տարբերակներ են՝

1) ***Տարբերակ 1.*** Գրանցվում է միայն մեկ սուպերխմբագիր, որը մուտքագրում է բոլոր ծառայությունները:
2) ***Տարբերակ 2.*** Գրանցվում է մեկական սուպերխմբագիր յուրաքանչյուր ծառայության մուտքագրման համար:
3) ***Տարբերակ 3.*** Գրանցվում է մեկ խմբագիր բոլոր ծառայությունների վերաբերյալ տվյալները լրացնելու և մեկ ադմինիստրատոր՝ լրացված տվյալները հաստատելու համար:
4) ***Տարբերակ 4.*** Գրանցվում է մեկական խմբագիր յուրաքանչյուր ծառայության վերաբերյալ տվյալները մուտքագրելու և միայն մեկ ադմինիստրատոր՝ բոլորի կողմից մուտքագրված տվյալները հաստատելու համար:
5) ***Տարբերակ 5.*** Գրանցվում է մեկ խմբագիր բոլոր ծառայությունների վերաբերյալ տվյալները մուտքագրելու և մեկական ադմինիստրատոր՝ յուրաքանչյուր ծառայության վերաբերյալ մուտքագրված տվյալները հաստատելու համար:
6) ***Տարբերակ 6.*** Գրանցվում է մեկ խմբագիր և մեկ ադմինիստրատոր յուրաքանչյուր ծառայության համար, որոնք համապատասխանաբար մուտքագրում են և հաստատում են ծառայության վերաբերյալ տվյալները:
7) ***Տարբերակ 7.*** Գրանցվում է վերոնշյալ մի քանի տարբերակով: Օրինակ՝ ֆինանսական կազմակերպության որոշ ծառայությունների մասով գրանցվում է միայն սուպերխմբագիր, մյուս ծառայությունների մասով՝ մեկ խմբագիր և մեկ ադմինիստրատոր և այլն:

Ընդ որում՝ ֆինանսական կազմակերպության միևնույն աշխատակիցը չի կարող լինել նույն ծառայության և՛ խմբագիր, և՛ ադմինիստրատոր, սակայն կարող է գրանցվել որպես խմբագիր մի ծառայության համար և որպես ադմինիստրատոր՝ մեկ այլ ծառայության համար կամ կարող է միաժամանակ լինել մի քանի ծառայությունների համար խմբագիր և սուպերխմբագիր՝ այլ ծառայությունների համար:

12. Յուրաքանչյուր անգամ խմբագրի, սուպերխմբագրի և ադմինիստրատորի կողմից Պորտալում գործողություններ կատարելիս (մուտքագրում, խմբագրում, հեռացում, հաստատում, մերժում, նկատառումների ուղարկում) Պորտալում գրանցված էլեկտրոնային հասցեներին գործողությունների կատարման վերաբերյալ ծանուցող հաղորդագրություն է ուղարկվում: Ընդ որում, խմբագրի և ադմինիստրատորի կողմից կատարված գործողությունների վերաբերյալ ծանուցող հաղորդագրությունները ուղարկվում են և՛ խմբագրին, և՛ ադմինիստրատորին, իսկ սուպերխմբագրի կողմից կատարված գործողությունների վերաբերյալ ծանուցող հաղորդագրությունները՝ սուպերխմբագրին:

13. Պորտալում սուպերադմինիստրատորի, սուպերխմբագրի, խմբագրի և ադմինիստրատորի իրավասությունների բաշխվածությունը նկարագրված է Հավելված 1-ում:

14. Սուպերադմինիստրատորի, սուպերխմբագրի, խմբագրի և ադմինիստրատորի կողմից Պորտալի օգտագործումը և Պորտալում տվյալների մուտքագրումը իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի:

15. Պորտալում ծառայությունների վերաբերյալ տվյալների մուտքագրումն իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի:

16. Ծառայության վճարների համար միջակայքերի առկայության դեպքում Պորտալում մուտքագրվում է վճարի առավելագույն արժեքը:


17. Վարկերի դեպքում տոկոսադրույքի համար միջակայքի առկայության դեպքում Պորտալում մուտքագրվում է տոկոսադրույքի առավելագույն արժեքը:

18. Ավանդի դեպքում տոկոսադրույքի համար միջակայքի առկայության դեպքում Պորտալում մուտքագրվում է տոկոսադրույքի նվազագույն արժեքը:

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունվարի 17-ի թիվ 3-Ն որոշման Հավելվածի

Իրավասությունների բաշխվածությունը Պորտալում

	Սուպերխմբագիր	Խմբագիր	Ադմինիստրատոր
1	Մուտքագրում և հաստատում է ծառայությունները	Մուտքագրում է ծառայությունները և ուղարկում հաստատման ադմինիստրատորին	Հաստատում է կամ մերժում կամ հետ է ուղարկում փոփոխելու (նկատառումների ներկայացում) խմբագրի կողմից կատարած ծառայության մուտքագրումը
2	Խմբագրում և հաստատում է ծառայությունները	Խմբագրում է ծառայությունները և ուղարկում հաստատման ադմինիստրատորին	Հաստատում է կամ մերժում կամ հետ է ուղարկում փոփոխելու (նկատառումների ներկայացում) խմբագրի կողմից կատարած ծառայության խմբագրումը
3	Հեռացնում և հաստատում է ծառայությունները	Հեռացնում է ծառայությունները և ուղարկում հաստատման ադմինիստրատորին	Հաստատում է կամ մերժում կամ հետ է ուղարկում փոփոխելու (նկատառումների ներկայացում) խմբագրի կողմից կատարած ծառայության հեռացումը



Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունվարի 17-ի թիվ 3-Ն որոշման Հավելվածի

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. ***Սուպերադմինիստրատորը*** Պորտալում ադմինիստրատոր, սուպերխմբագիր և խմբագիր գրանցելու համար՝

1) մուտք է գործում Պորտալ, սեղմում նոր պրոֆիլ ստեղծելու կոճակը,
2) «Նոր պրոֆիլի ստեղծում» բացվող պատուհանում
   ա. վերբեռնում է կազմակերպության լոգոն,
   բ. լրացնում է աշխատակցի անունը, ազգանունը,
   գ. լրացնում է Պորտալում աշխատակցի գրանցման կարգավիճակը՝ «Ընտրել գրանցվողի կարգավիճակը» դաշտի տարբերակներից որևէ մեկի վանդակում նշում կատարելու միջոցով (սուպերխմբագիր, խմբագիր կամ ադմինիստրատոր): Միևնույն ժամանակ՝ «Պատկանելիություն» դաշտում ընտրում թափվող ցուցակով (drop down menu) առաջարկվող մեկ կամ մեկից ավելի ծառայություններ, որոնց հասանելիություն է ունենալու գրանցվող աշխատակիցը: Ընդ որում՝ միևնույն աշխատակցին համակարգում տարբեր կարգավիճակներով գրանցելու համար սեղմում է «+Ավելացնել» կոճակը և կատարում նույն գործողությունները: Օրինակ՝ միևնույն աշխատակիցը գրանցվում է որպես խմբագիր ավտովարկ ծառայության համար և որպես ադմինիստրատոր ավանդ և ոսկու վարկ ծառայությունների համար,
   դ. լրացնում է աշխատակցի հեռախոսահամարը, լրացուցիչ այլ հեռախոսահամար՝ առկայության դեպքում,
   ե. լրացնում է էլեկտրոնային փոստի հասցեն,
   զ. սեղմում «Հաստատել» կոճակը: Ընդ որում՝ աշխատակցի գրանցումն այլ ամսաթվին ակտիվացնելու անհրաժեշտության դեպքում «Փոփոխել ակտիվացման ամսաթիվը» կոճակի վանդակում կատարվում է նշում՝ բացվող օրացույցի մեջ ակտիվացման այլ ամսաթիվ մուտքագրելու միջոցով:

Պորտալում գրանցվելուց հետո ադմինիստրատորը, սուպերխմբագիրը և խմբագիրը սույն կետի 2-րդ ենթակետով ներկայացված էլեկտրոնային հասցեին ստանում է գրանցման մասին էլեկտրոնային նամակ, որի միջոցով առաջին անգամ մուտք է գործում Պորտալ և սահմանում Պորտալ մուտք գործելու իր գաղտնաբառը:

2. Պորտալում գրանցված աշխատակիցների տեսանելիությունը փոխելու, տվյալները խմբագրելու և ջնջելու համար սուպերադմինիստրատորը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում «Աշխատակազմ» կոճակը,
3) գրանցված աշխատակիցների ցանկից սեղմում է տվյալ աշխատակցի տեսանելիությունը փոխելու (), նրա վերաբերյալ տվյալները խմբագրելու () և ջնջելու () համապատասխան կոճակները.
   ա. տեսանելիություն փոխելու կոճակը սեղմելիս «Տեսանելիության ժամանակահատվածը» բացվող պատուհանում նշում է այն ժամանակահատվածի սկիզբն ու ավարտը, որի ընթացքում աշխատակիցը պետք է տեսանելի չլինի Համակարգում և սեղմում «Հաստատել» կոճակը:
   բ. տվյալները խմբագրելու կոճակը սեղմելիս բացվող «Խմբագրել պրոֆիլը» դաշտում փոխում է սույն Հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում ներկայացված մեկ կամ մեկից ավելի տվյալներ և սեղմում «Հաստատել» կոճակը:
   գ. ջնջելու կոճակը սեղմելիս բացվող նոր պատուհանում սեղմում է «Հաստատել» կոճակը:

Ընդ որում, «Կարգավիճակ» և «Պատկանելիություն» կոճակների վրա սեղմելով ֆիլտրում է աշխատակիցների ցանկը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից

որևէ մեկն ընտրելու միջոցով (օրինակ՝ «Կարգավիճակ» դաշտի թափվող ցանկից ընտրում է Խմբագիր, իսկ «Պատկանելիություն» դաշտից՝ Ավանդ և Ապառիկ) կամ կոնկրետ աշխատակցի որոնման դեպքում՝ ընդհանուր որոնման գործիքի դաշտում ինքնուրույն մուտքագրում աշխատակցի անունը կամ ազգանունը:

Իսկ Համակարգում գրանցված աշխատակիցների ամբողջական ցանկն ու նրանց վերաբերյալ տվյալները «Էքս Էլ» (excel) ֆորմատով ստանալու համար սեղմում է «Բեռնել ցուցակը» կոճակը:

3. Պորտալում գրանցված աշխատակիցներին ծանուցում ուղարկելու համար սուպերադմինիստրատորը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում «Ուղարկել ծանուցումներ» բաժնի, այնուհետև նոր հաղորդագրություն ուղարկելու կոճակները,
3) «Նոր հաղորդագրություն» բացվող պատուհանում ինքնուրույն մուտքագրում է կամ ընտրում համապատասխան աշխատակիցների ցանկը («Ընտրել ցուցակից» կամ «Ըստ տեսակի» կոճակների վրա սեղմելու միջոցով), ում ուղղված է ծանուցումը, մուտքագրում է հաղորդագրության թեման ու բովանդակությունը, կցում էլեկտրոնային ֆայլը՝ առկայության դեպքում և սեղմում «Ուղարկել» կոճակը հաղորդագրությունն ուղարկելու կամ «Պահպանել սևագիր» կոճակը հաղորդագրությունը որպես սևագիր պահպանելու համար:

   Ընդ որում, «Սևագիր» կոճակի վրա սեղմելիս կարող է դիտարկել և ուղարկել նախկինում որպես սևագիր պահպանված հաղորդագրությունը՝ սույն կետում սահմանված կարգով:

   Ծանուցման ուղարկման համար այլ ամսաթիվ նշելու անհրաժեշտության դեպքում «Ուղարկել ամսաթիվ» կոճակի վանդակում կատարվում է նշում՝ բացվող օրացույցի վրա ծանուցման այլ ամսաթիվ ինքնուրույն մուտքագրելու միջոցով:
4) Ուղարկված և որպես սևագիր պահպանված ծանուցումները դիտարկելու համար սեղմում է համապատասխանաբար «Ուղարկված» և «Սևագիր» կոճակների վրա:
5) «Հեղինակ» և «Ժամանակահատված» կոճակների վրա սեղմելով ֆիլտրում է հաղորդագրությունների ցանկը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու և բացվող օրացույցի միջոցով ինքնուրույն ամսաթիվ նշելու միջոցով (օրինակ՝ «Հեղինակ» դաշտի թափվող ցանկից ընտրում է խմբագիր Պետրոս Պետրոսյանին, իսկ «Ժամանակահատված» դաշտում նշում՝ 2019 թվականի ապրիլի 1-ից 20-ը) կամ ընդհանուր որոնման գործիքի դաշտում ինքնուրույն մուտքագրում հաղորդագրության վերնագիրը:

4. Պորտալում իր անձնական տվյալները դիտարկելու, փոփոխություններ կատարելու համար սուպերադմինիստրատորը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում «Թարմացնել տվյալները» կոճակը,
3) բացվող նոր պատուհանում կատարում անհրաժեշտ փոփոխությունները,
4) սեղմում «Հաստատել» կոճակը:

5. Պորտալում ֆինանսական կազմակերպության մասնաճյուղերի, բանկոմատների, վճարումների ընդունման տերմինալների, բանկային ավտոմատացված մեքենաների (այսուհետ՝ ԲԱՄ) վերաբերյալ տվյալների լրացումն իրականացվում է երկու տարբերակով՝ տվյալների ուղղակի մուտքագրում (Տարբերակ 1) և «Էքս Էլ» (excel) ձևաչափի ֆայլի ներբեռնում (Տարբերակ 2):

6. Պորտալում մասնաճյուղերի, բանկոմատների, վճարումների ընդունման տերմինալների, ԲԱՄ-երի վերաբերյալ տվյալների ուղղակի մուտքագրման դեպքում սուպերադմինիստրատորը (Տարբերակ 1)

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում «Կազմակերպություն» կոճակը,
3) բացվող նոր էջում սեղմում նոր մասնաճյուղ, բանկոմատ, վճարային տերմինալ կամ ԲԱՄ լրացնելու կոճակը, լրացնում տվյալները ու սեղմում «Հաստատել» կոճակը,

7. «Էքս Էլ» (excel) ձևաչափի ֆայլի ներբեռնման դեպքում (Տարբերակ 2) սուպերադմինիստրատորը

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում «Կազմակերպություն» կոճակը,
3) բացվող նոր էջում «Բեռնել» կոճակի միջոցով ներբեռնում մասնաճյուղ, բանկոմատ, վճարային տերմինալ կամ ԲԱՄ-ի «Էքս Էլ» ձևաչափի ֆայլը և լրացնելուց հետո վերբեռնում Համակարգ:

Ընդ որում, կայքում մասնաճյուղ, բանկոմատ, վճարային տերմինալ կամ ԲԱՄ-երի տվյալների տեսանելիությունը փոխելու (), տվյալները խմբագրելու () և ջնջելու () համար սեղմում է տվյալ մասնաճյուղի կամ բանկոմատի համապատասխան կոճակները.

ա. տեսանելիության կոճակը սեղմելիս «Տեսանելիության ժամանակահատվածը» բացվող պատուհանում նշում է այն ժամանակահատվածի սկիզբն ու ավարտը, որի ընթացքում մասնաճյուղ, բանկոմատ, վճարային տերմինալ կամ ԲԱՄ-ը պետք է տեսանելի չլինի Համակարգում և սեղմում «Հաստատել» կոճակը:

բ. տվյալները խմբագրելու կոճակը սեղմելիս բացվող նոր դաշտում փոխում է 6-րդ կամ 7-րդ կետի համաձայն մուտքագրված մեկ կամ մեկից ավելի տվյալներ և սեղմում «Հաստատել» կոճակը:

գ. ջնջելու կոճակը սեղմելիս բացվող նոր պատուհանում սեղմում է «Հաստատել» կոճակը:

8. ***Սուպերխմբագիրը, խմբագիրը և ադմինիստրատորը*** Պորտալ մուտք գործելու համար օգտագործում են համակարգում գրանցված իրենց էլեկտրոնային հասցեն՝ որպես ծածկանուն և իրենց կողմից սահմանված գաղտնաբառը:

9. Գաղտնաբառը մոռանալու դեպքում գաղտնաբառի վերականգնումն իրականացվում է Պորտալ մուտք գործելու էջում տեղադրված «Մոռացել եք գաղտնաբառը» կոճակի վրա սեղմելու միջոցով:

10. Պորտալ մուտք գործելիս սահմանված քանակով (իրար հաջորդող) սխալ ծածկանուն և գաղտնաբառ մուտքագրելիս Պորտալի մուտքը որոշակի ժամանակահատվածով բլոկավորվում է տվյալ աշխատակցի համար:

11. Պորտալում սուպերխմբագրի, խմբագրի և ադմինիստրատորի կողմից ծառայությունների վերաբերյալ տվյալների լրացումն իրականացվում է երկու տարբերակով՝ տվյալների ուղղակի մուտքագրում (Տարբերակ 1) և «Էքս Էմ Էլ» (xml) ձևաչափի ֆայլի ներբեռնում (Տարբերակ 2):

12. Պորտալում տվյալների ուղղակի մուտքագրման դեպքում (Տարբերակ 1) սուպերխմբագիրը և խմբագիրը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) ծառայությունների ցանկից ընտրում է համապատասխան ծառայության տեսակը,
3) մուտքագրում է անհրաժեշտ տվյալները,
4) պահպանում դրանք՝ սուպերխմբագիրը սեղմելով «Հաստատել» կոճակը, իսկ խմբագիրը՝ «Ուղարկել հաստատման»:

Ընդ որում, խմբագիրը ծառայությունն ուղարկելուց առաջ «Հաղորդագրություն ադմինիստրատորին» դաշտում մուտքագրում է ծառայությունների վերաբերյալ ադմինիստրատորին ուղղված մեկնաբանությունը՝ առկայություն դեպքում:

Պորտալում ծառայության ակտիվացման համար այլ ամսաթիվ նշելու անհրաժեշտության դեպքում «Փոփոխել ակտիվացման ամսաթիվը» կոճակի վանդակում կատարվում է նշում՝ բացվող օրացույցի միջոցով ինքնուրույն ակտիվացման այլ ամսաթիվ մուտքագրելու միջոցով:

«Պահպանել սևագիր» կոճակի վրա սեղմելով պահպանում է ոչ ամբողջական լրացված ծառայության տվյալները՝ հետագայում շարունակելու հնարավորությամբ:

13. «Էքս Էմ Էլ» (xml) ձևաչափի ֆայլի ներբեռնման դեպքում (Տարբերակ 2) սուպերխմբագիրը և խմբագիրը

1) մուտք է գործում Պորտալ,
2) ծառայությունների ցանկից ընտրում է համապատասխան ծառայության տեսակը,
3) «Ներբեռնել նմուշը» կոճակի միջոցով ներբեռնում է «Էքս Էմ Էլ» (xml) ձևաչափի նմուշը և լրացնելուց հետո վերբեռնում Համակարգ՝ սեղմելով «Վերբեռնել ֆայլը» կոճակը,

4) պահպանում դրանք՝ սուպերխմբագիրը սեղմելով «Հաստատել» կոճակը, իսկ խմբագիրը՝ «Ուղարկել հաստատման»:

Ընդ որում, խմբագիրը ծառայությունն ուղարկելուց առաջ «Հաղորդագրություն ադմինիստրատորին» դաշտում մուտքագրում է ծառայությունների վերաբերյալ ադմինիստրատորին ուղղված մեկնաբանությունը՝ առկայություն դեպքում:

Պորտալում ծառայության ակտիվացման համար այլ ամսաթիվ նշելու անհրաժեշտության դեպքում «Փոփոխել ակտիվացման ամսաթիվը» կոճակի վանդակում կատարվում է նշում՝ բացվող օրացույցի միջոցով ինքնուրույն ակտիվացման այլ ամսաթիվ մուտքագրելու միջոցով:

14. Խմբագրի կողմից Պորտալում մուտքագրված ծառայության տվյալները ենթակա են ստուգման ադմինիստրատորի կողմից: Մուտքագրված տվյալները ստուգելու համար ադմինիստրատորը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում է հաստատման ուղարկված ծառայության համապատասխան կոճակի վրա (),
3) ստուգում մուտքագրված տվյալները և սեղմում «Հաստատել» կամ «Մերժել» կոճակները կամ նշում կատարում «Կան նկատառումներ» գրվածքի համապատասխան վանդակում՝ նշելով մուտքագրված տվյալների վերաբերյալ առկա նկատառումներն ու սեղմում «Ուղարկել նկատառումները» կոճակի վրա:

Ընդ որում, «Պրոդուկտի տիպ», «Կարգավիճակ» և «Ժամանակահատված» կոճակների վրա սեղմելով ֆիլտրում է ծառայությունների ցանկը՝ թափվող ցուցակներից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու և բացվող օրացույցի մեջ անհրաժեշտ ժամանակահատված ընտրելու միջոցով (օրինակ՝ «Պրոդուկտի տիպ» դաշտի թափվող ցանկից ընտրում է Ավտովարկ, «Կարգավիճակ» դաշտից՝ Հաստատված, «Ժամանակահատված» դաշտում նշում 2019 թվականի հունվարի 10-ից փետրվարի 20-ը և սեղմում «Հաստատել» կոճակը) կամ ընդհանուր որոնման գործիքի դաշտում ինքնուրույն մուտքագրում ծառայության անվանումը:

15. Պորտալում մուտքագրված ծառայության տեսանելիությունը փոխելու, ծառայության տվյալները խմբագրելու, ջնջելու և պատճենելու համար սուպերխմբագիրը և խմբագիրը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) գրանցված ծառայությունների ցանկից սեղմում տվյալ ծառայության տեսանելիությունը փոխելու (), խմբագրելու (), ջնջելու () և պատճենելու () համապատասխան կոճակները՝
   ա. տեսանելիությունը փոխելու կոճակը սեղմելիս «Տեսանելիության ժամանակահատվածը» բացվող պատուհանում նշում է այն ժամանակահատվածի սկիզբն ու ավարտը, որի ընթացքում ծառայությունը պետք է տեսանելի լինի Պորտալում և սուպերխմբագիրը սեղմում է «Հաստատել» կոճակը, իսկ խմբագիրը՝ «Ուղարկել հաստատման» կոճակը:
   բ. խմբագրելու կոճակը սեղմելիս կատարում է համապատասխան տվյալի կամ տվյալների փոփոխություն և սուպերխմբագիրը սեղմում է «Հաստատել» կոճակը, իսկ խմբագիրը՝ «Ուղարկել հաստատման» կոճակը:
   գ. ջնջելու կոճակը սեղմելիս բացվող նոր պատուհանում սեղմում է «Հաստատել» կոճակը:
   դ. պատճենելու կոճակը սեղմելիս բացվում է ծառայության լրացված դաշտերի կրկնօրինակը, որտեղ համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով հնարավոր է մուտքագրել նոր ծառայություն:

Ընդ որում, խմբագրի կողմից ծառայության տեսանելիությունը փոխելու, խմբագրելու և ջնջելու ուղարկելուց առաջ «Հաղորդագրություն ադմինիստրատորին» դաշտում մուտքագրում է ծառայությունների վերաբերյալ ադմինիստրատորին ուղղված մեկնաբանությունը՝ առկայություն դեպքում:

«Պրոդուկտի տիպ», «Կարգավիճակ» և «Ժամանակահատված» կոճակների վրա սեղմելով ֆիլտրում է ծառայությունների ցանկը՝ թափվող ցուցակներից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու և բացվող օրացույցի մեջ անհրաժեշտ ժամանակահատված ընտրելու միջոցով (օրինակ՝ «Պրոդուկտի տիպ» դաշտի թափվող ցանկից ընտրում է Ավանդ,

«Կարգավիճակ» դաշտից՝ Հաստատված, «Ժամանակահատված» դաշտում նշում 2019 թվականի փետրվարի 10-ից փետրվարի 25-ը և սեղմում «Հաստատել» կոճակը) կամ ընդհանուր որոնման գործիքի դաշտում ինքնուրույն մուտքագրում ծառայության անվանումը:

16. Խմբագրի կողմից Պորտալում ծառայության տվյալների, տեսանելիության փոփոխությունը ու մուտքագրված ծառայություն ջնջելը ենթակա են ստուգման և հաստատման ադմինիստրատորի կողմից: Կատարված փոփոխությունները ստուգելու համար ադմինիստրատորը՝

1) մուտք է գործում Պորտալ,
2) սեղմում է ուղարկված ծառայության համապատասխան կոճակի վրա,
3) տվյալները ստուգելուց հետո սեղմում «Հաստատել» կամ «Մերժել» կոճակները կամ նշում կատարում «Կան նկատառումներ» գրվածքի համապատասխան վանդակում՝ նշելով մուտքագրված տվյալների կամ ջնջված ծառայության վերաբերյալ առկա նկատառումներն ու սեղմում «Ուղարկել նկատառումները» կոճակի վրա:

17. Պորտալում գրանցված աշխատակիցներին ծանուցում ուղարկելու համար սուպերխմբագիրը, խմբագիրը և ադմինիստրատորը կատարում են սույն Հավելվածի 3-րդ կետում ներկայացված քայլերը:

18. Պորտալում անձնական տվյալները դիտարկելու, փոփոխություններ կատարելու համար սուպերխմբագիրը, խմբագիրը և ադմինիստրատորը կատարում են սույն Հավելվածի 4-րդ կետում ներկայացված քայլերը:

Հավելված 3
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունվարի 17-ի թիվ 3-Ն որոշման Հավելվածի

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Հիպոտեկ

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Անվանում	Ինքնուրույն մուտքագրվում է ֆինանսական կազմակերպության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Նպատակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
3	Արժույթ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
4	Վարկի գումար	Լրացվում է վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ Սկսած 3000000 Մինչև 30000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
5	Կանխավճար	Լրացվում են կանխավճարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ նշանների, բացառությամբ՝ ոչ ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով: Օրինակ՝ Սկսած 10 Մինչև 30 Կանխավճարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
6	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և դրանց պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Օրինակ՝ Նվազագույն 12 Պարբերականություն ամիս Առավելագույն 120 Պարբերականություն ամիս Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ «-»:

7	Արտոնյալ ժամկետ	Արտոնյալ ժամկետ սահմանված լինելու դեպքում համապատասխան վանդակում կատարվում է նշում (√): Բացվող նոր պատուհանում լրացվում է վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարի արտոնյալ ժամկետները թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և դրանց պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Օրինակ՝ Մայր գումար [24] Պարբերականություն [ամիս] Տոկոս [24] Պարբերականություն [ամիս] Մայր գումարի կամ տոկոսագումարի համար արտոնյալ ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
8	Մարման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Ընդ որում՝ «Բոլորը» և «Ոչ հավասարաչափ» տարբերակներն ընտրելու դեպքում նշվում է մայր գումարի և տոկոսագումարների մարման եղանակները՝ առաջարկվող տարբերակներից մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
9	Տրամադրման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
12	Ծառայությունը ֆինանսական կազմակերպության կայքէջում	Տեղադրվում է ծառայության՝ ֆինանսական կազմակերպության կայքէջի հղումը: Օրինակ՝ https://www.bank.am/individuals/cards
13	Ռեգիոն	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
14	Հատուկ քարտեր	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
15	Լրացուցիչ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
16	Լրացուցիչ տեղեկատվություն	Լրացվում են տվյալներ տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա ազդեցություն ունեցող պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

5. Գյուղատնտեսական վարկ

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Անվանում	Ինքնուրույն մուտքագրվում է ֆինանսական կազմակերպության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Նպատակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
3	Արժույթ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
4	Վարկի գումար	Լրացվում են վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ Սկսած 3000000 Մինչև 30000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:

5	Կանխավճար	Լրացվում են կանխավճարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ նշանների, բացառությամբ՝ ոչ ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով: Օրինակ՝ Սկսած 10 Մինչև 30 Կանխավճարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
6	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և դրանց պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Օրինակ՝ Նվազագույն 12 Պարբերականություն ամիս Առավելագույն 120 Պարբերականություն ամիս Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
7	Արտոնյալ ժամկետ	Արտոնյալ ժամկետ սահմանված լինելու դեպքում վանդակում կատարվում է նշում (√): Բացվող նոր պատուհանում լրացվում են վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարի արտոնյալ ժամկետները թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և դրանց պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Օրինակ՝ Մայր գումար 24 Պարբերականություն ամիս Տոկոս 24 Պարբերականություն ամիս Մայր գումարի կամ տոկոսագումարի համար արտոնյալ ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
8	Մարման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Ընդ որում՝ «Բոլորը» և «Ոչ հավասարաչափ» տարբերակներն ընտրելու դեպքում նշվում է մայր գումարի և տոկոսագումարների մարման եղանակները՝ առաջարկվող տարբերակներից մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
9	Տրամադրման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:

10	Տոկոսադրույք	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Ընդ որում՝ 1) Հաստատուն տոկոսադրույք ընտրելիս լրացվում է վարկի տոկոսադրույքը: Օրինակ՝ Տոկոսադրույք | Հաստատուն Հաստատուն | 10 2) Փոփոխվող տոկոսադրույք ընտրելիս լրացվում է՝ ա) վարկի տրամադրման պահի տոկոսադրույքը, ինչպես նաև, բ) տոկոսադրույքի փոփոխման առավելագույն և/կամ նվազագույն արժեքները՝ համապատասխանաբար ընտրելով «+» և/կամ «-» տարբերակները: Այն դեպքում, երբ առավելագույն և նվազագույն արժեքների փոփոխման չափը համընկնում է՝ ընտրվում է «±» տարբերակը: Օրինակ՝ Տոկոսադրույք | Փոփոխվող Փոփոխվող | 10.5 | + | 3 10.5 | - | 7 *Կամ* Տոկոսադրույք | Փոփոխվող Փոփոխվող | 10.5 | ± | 3 3) Բոլորը տարբերակն ընտրելիս լրացվում է հաստատուն և փոփոխվող տոկոսադրույքների համար նախատեսված դաշտերը՝ սույն կետում նկարագրված սկզբունքների համաձայն: Ընդ որում՝ բոլոր դաշտերում տոկոսադրույքը լրացվում է թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ նշանների, բացառությամբ՝ ոչ ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով: Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում (օրինակ՝ 150 000 դրամ և ավել աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):
11	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ | 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:

		Օրինակ՝ 5% Նվազագույն 10000 Առավելագույն 40000 Վարկային հայտի ուսումնասիրության վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
11	Վարկի սպասարկման վճար (ամսական)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ, թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման ու թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ 5% վարկի մնացորդի նկատմամբ Նվազագույն 5000 Առավելագույն 25000 Վարկի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
12	Գրավի գնահատման վճար (միանվագ) Կանխիկացման վճար Նոտարական վավերացման վճար (միանվագ) Գրավի պետական գրանցման հետ կապված վճար (միանվագ)	Վճարները կարող են լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ 5% Նվազագույն 10000 ավելագույն 40000 Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Վճարները սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:

13	Գրավի ապահովագրության վճար (տարեկան) Գրավի պահպանման վճար (միանվագ)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ա) վարկի մայր գումարի, բ) վարկի մնացորդի, գ) գրավի արժեքի, դ) վարկի մնացորդ գումարած տոկոսների նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ 5% վարկի մայր գումարի նկատմամբ Նվազագույն 25000 Առավելագույն 70000 «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների չափը: Վճարները սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
14	Այլ վճարներ	Այլ վճարներ սահմանված լինելու դեպքում վանդակում կատարվում է նշում (√): Լրացվում է վերջինիս՝ 1) անվանումը՝ ինքնուրույն մուտքագրման միջոցով, 2) ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով, 3) վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) կամ որպես տոկոս ա) վարկի մայր գումարի, բ) վարկի մնացորդի, գ) գրավի արժեքի կամ դ) վարկի գումար գումարած տոկոսների նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով, 4) առավելագույն և նվազագույն արժեքները՝ առկայության դեպքում: Վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 5% Վարկի մնացորդի նկատմամբ Նվազագույն 25000 Առավելագույն 70000

		«+Ավելացնել այլ վճար» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերի միջոցով հնարավոր է մուտքագրել մեկից ավելի այլ վճարներ: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված վճարի վերաբերյալ տվյալները ջնջվում են: «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
15	Ապահովվածություն	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
16	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը թվերի մուտքագրման միջոցով: Օրինակ՝ 70
17	Տույժ/տուգանք	Լրացվում է ինքնուրույն մուտքագրման միջոցով՝ յուրաքանչյուր տույժ/տուգանքի համապատասխան դաշտերում առանձին-առանձին: Լրացվում է վարկառուի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը և կիրառման դեպքերը: Այն դեպքում, երբ նշված տույժ/տուգանքը բացակայում է, համապատասխան դաշտում լրացվում է «Սահմանված չէ»: Իսկ ներկայացված ցանկից դուրս այլ տույժ/տուգանքի առկայության դեպքում է ինքնուրույն մուտքագրման միջոցով լրացվում է «Այլ» դաշտում: Օրինակ՝ Վարկի մայր գումարի չվճարելու դեպքում 4 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական
18	Հատուկ ծրագիր	Վարկավորման հատուկ ծրագրերի շրջանակներում առաջարկվող վարկերի դեպքում վանդակում կատարվում է նշում (√): Բացվող նոր պատուհանում լրացվում է ծրագրի անվանումը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և սուբսիդավորվող տոկոսի չափը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ նշանների, բացառությամբ՝ ոչ ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով: Սուբսիդավորվող տոկոսի չափի համար միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում (օրինակ՝ 150 000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 2 տոկոս): Օրինակ՝ Բնակարան երիտասարդներին Տոկոսը՝ 3 Վարկավորման հատուկ ծրագրի անվանման բացակայության դեպքում թափվող ցուցակով (drop down menu) առաջարկվող տարբերակներից ընտրվում է «Այլ ծրագիր» տարբերակը և լրացվում է նաև ծրագրի անվանումը՝ ինքնուրույն մուտքագրման միջոցով:

19	Փաստաթղթերի ցանկ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով): Առաջարկվող տարբերակներում անհրաժեշտ փաստաթղթի անվանման բացակայության դեպքում ինքնուրույն մուտքագրման միջոցով լրացվում է նոր փաստաթղթի անվանումը: Օրինակ՝ Փաստաթուղթ 1 Մեկից ավելի նոր փաստաթուղթ մուտքագրվում է «Ավելացնել փաստաթուղթ» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված փաստաթղթի վերաբերյալ տվյալները ջնջվում են:
20	Ծառայությունը ֆինանսական կազմակերպության կայքէջում	Տեղադրվում է ծառայության՝ ֆինանսական կազմակերպության կայքէջի հղումը: Օրինակ՝ https://www.bank.am/individuals/loans/mortgage
21	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում են 1) տվյալներ սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ (սահմանված է սույն ենթակետի 10-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ դաշտերում), 2) ինչպես նաև տվյալներ տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

6. Դրամական փոխանցումներ

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Անվանում	Ինքնուրույն մուտքագրվում է ֆինանսական կազմակերպության կողմից տվյալ ծառայությանը տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Փոխանցման ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Համակարգի անվանում	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
4	Ստացող երկիր	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
5	Ստացող բանկ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
6	Արժույթ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Գումար	Լրացվում են փոխանցվող գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ Սկսած 500 Մինչև 500000

		Փոխանցվող գումարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
8	Տևողություն	Լրացվում են փոխանցման առավելագույն և նվազագույն ժամկետները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Օրինակ՝ Նվազագույն 2 Պարբերականություն րոպե Առավելագույն 1 Պարբերականություն աշխ. օր Փոխանցման նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
9	Միջնորդավճար	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես տոկոս փոխանցվող գումարի նկատմամբ՝ թվերի և տոկոսի նշանի մուտքագրմամբ (%) (առանց բացատների կամ այլ նշանների, բացառությամբ՝ ոչ ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով) Օրինակ՝ 1 միաժամանակ 2) որպես բացարձակ գումար (ֆիքսված)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների)՝ ընտրելով գումարի սահմանված արժույթը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը ընտրելու միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների)՝ ընտրելով գումարի սահմանված արժույթը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը ընտրելու միջոցով: Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ Ֆիքսված 500 Արժույթ դրամ Նվազագույն 100 Առավելագույն 3000 Արժույթ դրամ
10	Փաստաթղթերի ցանկ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով): Առաջարկվող տարբերակներում անհրաժեշտ փաստաթղթի անվանման բացակայության դեպքում ինքնուրույն մուտքագրման միջոցով լրացվում է նոր փաստաթղթի անվանումը: Օրինակ՝ Փաստաթուղթ 1 Մեկից ավելի նոր փաստաթուղթ մուտքագրվում է «Ավելացնել փաստաթուղթ» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված փաստաթղթի վերաբերյալ տվյալները ջնջվում են:

11	Ծառայությունը ֆինանսական կազմակերպության կայքէջում	Տեղադրվում է ծառայության՝ ֆինանսական կազմակերպության կայքէջի հղումը: Օրինակ՝ https://www.bank.am/individuals/loans/moneytransfer
12	Լրացուցիչ տեղեկատվություն	Լրացվում է՝ 1) տվյալներ սակագների վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում 2) տվյալներ տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

7. Վարկի վերաֆինանսավորում

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Անվանում	Ինքնուրույն մուտքագրվում է ֆինանսական կազմակերպության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Նպատակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
3	Վարկի գումար	Լրացվում են վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ Սկսած 3000000 Մինչև 30000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
4	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և դրանց պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Օրինակ՝ Նվազագույն 12 Պարբերականություն ամիս Առավելագույն 120 Պարբերականություն ամիս Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ «-»:
5	Արտոնյալ ժամկետ	Արտոնյալ ժամկետ սահմանված լինելու դեպքում վանդակում կատարվում է նշում (√): Բացվող նոր պատուհանում լրացվում է վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարի արտոնյալ ժամկետները թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) և դրանց պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:

		Օրինակ՝ Մայր գումար 24 Պարբերականություն ամիս Տոկոս 24 Պարբերականություն ամիս Մայր գումարի կամ տոկոսագումարի համար արտոնյալ ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
6	Մարման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Ընդ որում՝ «Բոլորը» և «Ոչ հավասարաչափ» տարբերակներն ընտրելու դեպքում նշվում են մայր գումարի և տոկոսագումարների մարման եղանակները՝ առաջարկվող տարբերակներից մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
7	Տրամադրման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
8	Տոկոսադրույք	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Ընդ որում՝ 1) Հաստատուն տոկոսադրույք ընտրելիս լրացվում են վարկի տոկոսադրույքը կամ այն տոկոսային կետերը, որի չափով նվազեցվում է սկզբնական տոկոսադրույքը «-» նշանի կիրառմամբ: Օրինակ՝ Տոկոսադրույք Հաստատուն Հաստատուն 10 *Կամ* Օրինակ՝ Տոկոսադրույք Հաստատուն Հաստատուն -2 2) Փոփոխվող տոկոսադրույք ընտրելիս լրացվում է՝ ա) վարկի տրամադրման պահի տոկոսադրույքը, ինչպես նաև, բ) տոկոսադրույքի փոփոխման առավելագույն և/կամ նվազագույն արժեքները՝ համապատասխանաբար ընտրելով «+» և/կամ «-» տարբերակները: Այն դեպքում, երբ առավելագույն և նվազագույն արժեքների փոփոխման չափը համընկնում է՝ ընտրվում է «±» տարբերակը: Օրինակ՝ Տոկոսադրույք Փոփոխվող Փոփոխվող 10.5 + 3 10.5 - 7 *Կամ* Տոկոսադրույք Փոփոխվող Փոփոխվող 10.5 ± 3

		3) «Բոլորը» տարբերակն ընտրելիս լրացվում է հաստատուն և փոփոխվող տոկոսադրույքների համար նախատեսված դաշտերը՝ սույն կետում նկարագրված սկզբունքների համաձայն: Ընդ որում՝ բոլոր դաշտերում տոկոսադրույքը լրացվում է թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ նշանների, բացառությամբ՝ ոչ ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով և հաստատուն: Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում (օրինակ՝ 150 000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):
9	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ 5% Նվազագույն 10000 Առավելագույն 40000 Վարկային հայտի ուսումնասիրության վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
10	Վարկի սպասարկման վճար (ամսական)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ, թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման ու թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»:

		Օրինակ՝ 5% վարկի մնացորդի նկատմամբ Նվազագույն 5000 Առավելագույն 25000 Վարկի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
11	Գրավի գնահատման վճար Կանխիկացման վճար Նոտարական վավերացման վճար	Վճարները կարող են լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ 5% Նվազագույն 10000 Առավելագույն 40000 Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Վճարները սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
12	Գրավի ապահովագրության վճար (տարեկան)	Վճարը կարող է լրացվել՝ 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ա) վարկի մայր գումարի, բ) վարկի մնացորդի, գ) գրավի արժեքի, դ) վարկի մնացորդ գումարած տոկոսների նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ 5% վարկի մայր գումարի նկատմամբ Նվազագույն 25000 Առավելագույն 70000

		«Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների չափը: Գրավի ապահովագրության վճարը սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0»:
13	Այլ վճարներ	Այլ վճարներ սահմանված լինելու դեպքում վանդակում կատարվում է նշում (√): Լրացվում է վերջինիս՝ 1) անվանումը՝ ինքնուրույն մուտքագրման միջոցով, 2) ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով, 3) վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների) կամ որպես տոկոս ա) վարկի մայր գումարի, բ) վարկի մնացորդի, գ) գրավի արժեքի կամ դ) վարկի գումար գումարած տոկոսների նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով, 4) առավելագույն և նվազագույն արժեքները՝ առկայության դեպքում: Վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում՝ «-»: Օրինակ՝ Անվանում [Վճար 1] Պարբերականություն [միանվագ] Գումար [5%] [Վարկի մնացորդի նկատմամբ] Նվազագույն [25000] Առավելագույն [70000] Մեկից ավելի այլ վճարներ ունենալու դեպքում վճարները մուտքագրվում են «+Ավելացնել այլ վճար» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված վճարի վերաբերյալ տվյալները ջնջվում են: «Լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում լրացվում են տվյալներ այն չափանիշների վերաբերյալ, որոնց բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք:
14	Ապահովվածություն	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
15	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը թվերի մուտքագրման միջոցով: Օրինակ՝ [70]

16	Տույժ/տուգանք	Լրացվում է ինքնուրույն մուտքագրման միջոցով՝ յուրաքանչյուր տույժ/տուգանքի համապատասխան դաշտերում առանձին-առանձին: Լրացվում են վարկառուի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը և կիրառման դեպքերը: Այն դեպքում, երբ նշված տույժ/տուգանքը բացակայում է, համապատասխան դաշտում լրացվում է «Սահմանված չէ»: Իսկ ներկայացված ցանկից դուրս այլ տույժ/տուգանքի առկայության դեպքում է ինքնուրույն մուտքագրման միջոցով լրացվում է «Այլ» դաշտում: Օրինակ՝ Վարկի մայր գումարի չվճարելու դեպքում 4 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական
17	Փաստաթղթերի ցանկ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով): Առաջարկվող տարբերակներում անհրաժեշտ փաստաթղթի անվանման բացակայության դեպքում ինքնուրույն մուտքագրման միջոցով լրացվում է նոր փաստաթղթի անվանումը: Օրինակ՝ Փաստաթուղթ 1 Մեկից ավելի նոր փաստաթուղթ մուտքագրվում է «Ավելացնել փաստաթուղթ» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված փաստաթղթի վերաբերյալ տվյալները ջնջվում են:
18	Ծառայությունը ֆինանսական կազմակերպության կայքէջում	Տեղադրվում է ծառայության՝ ֆինանսական կազմակերպության կայքէջի հղումը: Օրինակ՝ https://www.bank.am/individuals/loans/refinance
19	Լրացուցիչ տեղեկատվություն	Լրացվում են 1) տվյալներ սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ (սահմանված է սույն ենթակետի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ դաշտերում) 2) տվյալներ տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

8. Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Անվանում	Ինքնուրույն մուտքագրվում է ֆինանսական կազմակերպության կողմից ծառայության տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Երկրներ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):

3	Ժամկետ	Լրացվում են ծառայության համար սահմանված նվազագույն և առավելագույն ժամկետներն օրերով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): Օրինակ՝ Նվազագույն՝ 1 Առավելագույն՝ 360
4	Մուտքերի քանակ/ Օրերի քանակ/ Գործակից	Լրացվում է ապահովագրական ծածկույթի ընթացքում երկիր կատարվելիք թույլատրելի մուտքերի քանակը, օրերի քանակը և դրանց համար սահմանված ճշգրտող գործակիցը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների), բացառությամբ գործակցի լրացման դեպքում ամբողջ թիվ մուտքագրելիս լրացվում է «.» նշանի միջոցով: Օրինակ՝ Մուտքերի քանակ՝ 1 Օրերի քանակ՝ 30 Գործակից՝ 30
5	Գումար/Արժույթ/ Սակագին	Լրացվում է տվյալ ծառայության ապահովագրական գումարը՝ թվերի մուտքագրման միջոցով և դրա արժույթը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը ընտրելու միջոցով: Միաժամանակ՝ «Գումար» դաշտում լրացվում է ապահովագրական սակագնի բացարձակ արժեքը և/կամ «Տոկոս» դաշտում լրացվում է ապահովագրական սակագնի տոկոսը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): «Գումար/արժույթ/սակագին» մեկից ավելի տարբերակ ունենալու դեպքում մուտքագրվում է «Ավելացնել» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված տարբերակի վերաբերյալ տվյալները ջնջվում են: Օրինակ՝ Ապահովագրական գումար՝ 30 000 Արժույթ՝ եվրո Տոկոս՝ 0.1
6	Տարիք	Լրացվում է՝ 1) «էքս էլ» (excel) ձևաչափի ֆայլը «Կցել» կոճակի միջոցով բեռնելու միջոցով (անհրաժեշտ «էքս էլ» ձևաչափի ֆայլի ներկայացուցչական օրինակին հնարավոր է ծանոթանալ «Բեռնել» կոճակի միջոցով ներբեռնելով համապատասխան փաստաթուղթը) կամ 2) ինքնուրույն մուտաքրման միջոցով՝ լրացնելով ապահովագրվող անձի տարիքի համար սահմանված նվազագույն և առավելագույն արժեքները և դրանց համար սահմանված ճշգրտող գործակիցը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների): «Ավելացնել տարիք» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում հնարավոր է ավելացնել տարիքի միջակայքեր: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված տարիքի վերաբերյալ տվյալները ջնջվում են:

7	Չհատուցվող գումար	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով: Ընդ որում՝ «Բոլորը» և «Այո» տարբերակներն ընտրելու դեպքում նշվում է գումարի սահմանաչափը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ նշանների):
8	Ապահովագրական պատահար	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
9	Հատուցվող ծախսեր	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը ընտրելու միջոցով («Multiple choice» սկզբունքով):
10	Չհատուցվող ծախսեր	Լրացվում է չհատուցվող ծախսերի ամբողջական ցանկը՝ ինքնուրույն մուտքագրման միջոցով:
11	Հատուցման բացառություններ	Լրացվում է հատուցման բացառությունների ամբողջական ցանկը՝ ինքնուրույն մուտքագրման միջոցով:
12	Փաստաթղթերի ցանկ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով): Առաջարկվող տարբերակներում անհրաժեշտ փաստաթղթի անվանման բացակայության դեպքում ինքնուրույն մուտքագրման միջոցով լրացվում է նոր փաստաթղթի անվանումը: Օրինակ՝ Փաստաթուղթ 1 Մեկից ավելի նոր փաստաթուղթ մուտքագրվում է «Ավելացնել փաստաթուղթ» նշանի վրա սեղմելու միջոցով բացվող նոր դաշտերում: «Ջնջել» նշանի վրա սեղմելու միջոցով մուտքագրված փաստաթղթի վերաբերյալ տվյալները ջնջվում են:
13	Ծառայությունը ֆինանսական կազմակերպության կայքէջում	Տեղադրվում է ծառայության՝ ֆինանսական կազմակերպության կայքէջի հղումը: Օրինակ՝ https://www.bank.am/individuals/loans/mortgage
14	Լրացուցիչ տեղեկատվություն	Լրացվում են 1) տվյալներ սակագների վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում, 2) տվյալներ տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2020)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 111
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 115
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 120
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 121
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 133
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 148
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 158
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 160
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 169
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2019 թ. դեկտեմբեր	2019 թ. դեկտեմբեր իրական աճի փոփոխությունը 2018 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)	2020 թ. հունվար	2020 թ. հունվարի իրական աճի փոփոխությունը 2019 թ. հունվարի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		10.7		8.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	247826.7	6.4	144147.2	13.4
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	89825.8	4.9	11846.3	7.7
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	386894.1	6.4	207329.2	10.3
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	214808.0	16.6	151476.1	13.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	765.2	14.0	726.3	18.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	286851[1]	105.3[2]	222259[3]	106.8[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2020 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	1.1	0.3	1.7
2020 թ. հունվար 2019 թ. հունվարի նկատմամբ	0.3	2.8	2.7	-6.1

ԳՆԱՃ

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.8	1.8	1.4
Փետրվար	-0.5	0.6	
Մարտ	0.1	0.1	
Ապրիլ	-0.3	-0.1	
Մայիս	-1.0	-0.4	
Հունիս	-1.6	-1.9	
Հուլիս	-1.2	-1.9	
Օգոստոս	0.6	-0.4	
Սեպտեմբեր	0.3	0.2	
Հոկտեմբեր	0.1	0.6	
Նոյեմբեր	1.0	1.1	
Դեկտեմբեր	1.5	1.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.9	0.8	0.3
Փետրվար	3.3	1.9	
Մարտ	3.7	1.9	
Ապրիլ	2.4	2.2	
Մայիս	1.6	2.8	
Հունիս	0.9	2.5	
Հուլիս	2.3	1.7	
Օգոստոս	3.3	0.6	
Սեպտեմբեր	3.5	0.5	
Հոկտեմբեր	2.8	0.9	
Նոյեմբեր	1.8	1.0	
Դեկտեմբեր	1.8	0.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	*2020 թ. հունվարը 2019 թ. հունվարի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (փոկոսային կետ)*
Գնաճ	**0.3**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-1.7	-0.69
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	5.0	0.21
Հագուստ և կոշիկ	2.9	0.11
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.9	0.15
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.3	-0.01
Առողջապահություն	1.9	0.18
Տրանսպորտ	2.9	0.24
Կապ	-0.1	-0.01
Հանգիստ և մշակույթ	-0.6	-0.01
Կրթություն	3.7	0.11
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.6	0.02
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	3.1	0.14

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	-0.2	0.0
Փետրվար	0.2	0.1	
Մարտ	0.1	0.1	
Ապրիլ	-0.1	0.0	
Մայիս	-0.2	-0.1	
Հունիս	-0.3	0.0	
Հուլիս	-0.3	-0.2	
Օգոստոս	0.3	0.1	
Սեպտեմբեր	0.8	0.2	
Հոկտեմբեր	0.8	0.1	
Նոյեմբեր	0.2	0.1	
Դեկտեմբեր	0.0	0.1	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	4.3	1.2	0.4
Փետրվար	4.6	1.0	
Մարտ	4.3	0.9	
Ապրիլ	3.7	0.7	
Մայիս	3.2	0.7	
Հունիս	2.8	0.8	
Հուլիս	2.5	0.8	
Օգոստոս	2.4	0.7	
Սեպտեմբեր	2.7	0.6	
Հոկտեմբեր	2.5	0.2	
Նոյեմբեր	1.8	0.1	
Դեկտեմբեր	1.5	1.8	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2020 թ. հունվարը 2019 թ. հունվարի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**0.4**	
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	6.7	0.30
Հաց ցորենի, բարձր տեսակի	4.8	0.19
Հնդկացորեն	19.9	0.05
Վիրահատական ծառայություններ	2.4	0.04
«Արագ սննդի» կետերում, կրպակներում, առևտրային սայլակներից, ավտոմատների միջոցով իրացվող պատրաստի սնունդ	8.0	0.04
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	3.3	0.03
Օճառ ձեռքի	9.4	0.03
Մակարոն	9.4	0.02
Սպասք լվացող միջոց (հեղուկ կամ փոշի)	7.0	0.02
Բջջային կապի հետվճարային ծառայություններ	-7.0	-0.03
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	-2.2	-0.03
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	-4.3	-0.04
Բուսական յուղ արևածաղկի	-6.0	-0.05
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	-14.0	-0.10
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-5.7	-0.22

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2019 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – դեկտեմբերը 2018 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)	2020 թ. հունվար (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվարը 2019 թ. հունվարի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	2640.3	109.4	173.8	120.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	5513.8	110.8	305.2	102.3
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2873.5	112.1	131.4	85.2

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Հունվար			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	50700	54573	-3873	1055640	425984	629657
ԱՄՆ	16342	14897	1445	280911	274974	5937
Ուկրաինա	564	856	-292	13108	14893	-1785
Ղազախստան	1820	241	1579	30688	4988	25701
Գերմանիա	2727	2082	644	41602	41359	244
Իսպանիա	809	694	115	11455	17643	-6189
